ՄԱՍ VI. ՀԵՏԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀ ԱՅԼԵՎՍ ՉԿԱ

Լիսաբոնի «անեծքը»

1996 թվականի դեկտեմբերի 2-3-ը տեղի է ունենում ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթնաժողովը, որտեղ ակնհայտ է դառնում, որ ածում է Ադրբեջանի ու միջազգային հանրության գործադրած ճնշումը Հայաստանի վրա. ընտրություններից հետո ստեղծված անկայուն վիճակը նկատելի էր ոչ միայն երկրի ներսում, այլև ՀՀ սահմաններից դուրս:

Լիսաբոնի գագաթնաժողովին էր անդրադարձել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2023 թ. նոյեմբերի 16-ին Ազգային ժողովի իր ելույթում, որում նա մասնավորապես ասել էր. «Այն, ինչ մենք ուզում էինք Լեռնային Ղարաբաղի հարցով, այնուհանդերձ չէր առնվազն ԵԱՀԿ 1996 թվականի դեկտեմբերին՝ Լիսաբոնի գագաթնաժողովից հետո»:

Հակադարձելով՝ Հայ ազգային կոնգրեսի փոխնախագահ Լևոն Զուրաբյանը հանդես էր եկել պատասխան հայտարարությամբ, «1996 թվականին Հայաստանն այնքան ուժեղ էր, որ հակառակվելով աշխարհի մեծերին, այդ թվում՝ ԱՄՆ-ին, Ռուսաստանին և Ֆրանսիային՝ միանակ վետո էր դրել Ղարաբաղյան հակամարտության՝ մեզ համար ոչ գանկալի կարգավորման տարբերակի նկատմամբ՝ դրա դիմաց չվճարելով որևէ դիվանագիտական գին»:

Անշուշտ, կարելի է երկար վիճել այն հարցի շուրջ, թե Հայաստանը Լիսաբոնի իր դիրքորոշման դիմաց, այնուամենայնիվ, ինչ-որ գին վճարել էր, թե ոչ: Այս գիրքն այդ հարցի պատասխանը գտնելու նպատակ և հավակնություն չունի: Բայց ներկայացվող փաստերը և 1997 թվականին ծավալվող իրադարձությունները վկայում են, որ Հայաստանը շարունակում էր մնալ նախորդ տարվա նախագահական ընտրությունների լարված «թակարդում»:

«Վազգենի մասին խոսում են մարդիկ, որոնք նրա ճկույթը չարժեն»

1997 թվականի փետրվարի 19-ին Ազգային ժողովում պատգամավոր Գրիգոր Ավագյանը պաշտպանության նախարարին խնդրում է մեկնաբանել պնդումներն իր մոտալուտ պաշտոնանկության մասին: Հարցին պատասխանում է Լևոն Տեր-Պետրոսյանը: Նախ այդ պնդումները որակում է որպես «չարամիտ տեղեկատվություն», ապա զուգահեռներ է անցկացնում 1920 թվականի հետ, երբ «որոշ ուժեր քաղաքական նպատակներով քայքայում էին մեր բանակը»:

«Վազգեն Սարգսյանի մասին խոսում են մարդիկ, որոնք նրա ճկույթը չարժեն»,- ասում է Լևոն Տեր-Պետրոսյանը և հավելում, որ եթե Հայաստանում կա մեկը, որն արժանի է ազգային հերոսի կոչման, ապա դա Վազգեն Սարգսյանն է: Նախագահը նկատում է նաև, որ եթե կառավարության բոլոր անդամներն աշխատեին Վազգեն Սարգսյանի նման բարեխղճորեն, ապա «մենք կատարյալ պետություն կունենայինք»:

Նոր ճգնաժամ

Այս խոսքերից մի քանի շաբաթ անց կառավարության անդամները հայտնվում են դժվար կացության մեջ. հրաժարական է տալիս մի քանի ամիս առաջ վարչապետ նշանակված Արմեն Սարգսյանը: Նա մեկնում է արտերկիր՝ «հայտնաբերված ծանր հիվանդության դեմ շտապ բուժման» նպատակով: Սակայն շրջանառվող լուրերի համաձայն՝ Արմեն Սարգսյանի հրաժարականի և Հայաստանից հեռանալու դրդապատճառը Վազգեն Սարգսյանի հետ ունեցած նրա հակամարտությունն էր: Եվ Արմեն Սարգսյանը, և Վազգեն Սարգսյանը տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով հերքել են այդ լուրերը: Սակայն դրանք մինչև օրս չեն կորցրել իրենց ուժը: Այդ վարկածն է, օրինակ, շարունակում առաջ քաշել Հրանտ Բագրատյանը: Նրա խոսքով՝ բախումն առաջացել էր այն պատճառով, որ Արմեն Սարգսյանը կրճատել էր բանակի ֆինանսավորումը՝ չնայած նախապես տված իր խոստմանը:

Մարտի 14-ին Վանո Սիրադեղյանը լրագրողների հետ զրույցում իր գնահատականն է տալիս Արմեն Սարգսյանի գործունեությանը. «Ենթադրում եմ՝ հայի բախտից է, որ Արմեն Սարգսյանը հիվանդացավ»:

«Արմեն Սարգսյանն այնպիսի նշաձող սահմանեց, որից հետո եզակի մարդիկ են մնում, որ կարող են գոնե իր արածի կեսն անել»,- մանրամասնում է Վանոն՝ առանց հստակեցնելու նախկին վարչապետի ձեռքբերումները:

Երևանի քաղաքապետն արձանագրում է, որ վարչապետի թեկնածու փաստացի չկա, և որ «նախագահն իր ամբողջ գործունեության ընթացքում երբևէ այսքան դժվար վիճակում չի եղել»:

Պատասխանելով իր թեկնածության մասին հնչեցված հարցին՝ Վանո Սիրադեղյանն ասում է.

«Եթե ես գնահատեմ, որ ուրիշ ելք չկա կառավարության համար, վիճակի համար, իհարկե կհամաձայնեմ, չհամաձայնելու տարբերակ չունեմ: Թեև քաղաքապետի պաշտոնն այն պաշտոնն է, որտեղ շատ հանգիստ եմ ինձ զգում, գիտեմ՝ ինչ աշխատանք է, ինչ ծրագրեր ունեմ, որոնք իմ հնարավորությունների սահմանում են: Մյուսը մի քիչ դժվար է: Բայց եթե իմ համախոհներն ասեն, որ դա անհրաժեշտ է, բնականաբար կհամաձայնեմ»:

Այդ զրույցի ընթացքում Վանո Սիրադեղյանին հիշեցնում են հայտնի խնջույքի և դրա տեսագրության մասին՝ մեջբերելով Վազգեն Սարգսյանի այն հայտարարությունը, որ ինքը պատրաստ է կրկնել այն ամենը, ինչ ասել է Արշալույս գյուղում: Վանոն իր հերթին հաստատում է, որ ինքն էլ է պատրաստ դա անել՝ բացառությամբ մի նախադասության՝ Քլինթոնի հասցեին ասված իր խոսքերը:

Մեկնաբանելով արտաքին դավադրության մասին իր խոսքերը և երկու տարի անց ապացույցներ ներկայացնելու խոստումը՝ Վանո

Միրադեղյանն այսպիսի պատասխան է տալիս.

«ՆԴԲ նախարարի պաշտոնից դուրս գալուց հետո մի շատ կարևոր բայլ եմ արել: Բոլոր օպերատիվ նյութերը, որ այդ ժամանակ օգտագործվում էին, և որոնց ավելի քան 90 տոկոսը նախարարի մոտ էր, բոլորը այրել եմ՝ իմ կյանքի և հետագա անվտանգության համար: Այդպիսի նյութ այժմ չկա, և ապացույցներ մի բիչ բարդանում է: Կարիքն էլ չկա՝ ինձ թվում է»:

Քոչարյանը նշանակվում է Հայաստանի վարչապետ

Այս անգամ ևս Լևոն Տեր-Պետրոսյանն անտեսում է Վանոյի՝ վարչապետ դառնալու ցանկությունը: Մարտի 20-ին բոլորի համար անսպասելիորեն Հայաստանի վարչապետ է նշանակվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Դրան նախորդել էր Վազգեն Սարգսյանի այցելությունը Ստեփանակերտ: Հետագայում պաշտպանության նախարարը կնշի, որ ստիպված էր եղել բավական երկար համոզել Քոչարյանին:

Տիգրան Հակոբյանն առարկում է, որ Քոչարյանին վարչապետ նշանակելը հենց Տեր-Պետրոսյանի գաղափարն էր, ոչ թե Վազգենի: Այլ հարց է, որ դա «Վազգենի սրտով էր».

«Վանոն թեզն էր՝ եթե Ռոբերտին բերենք, ինքը կզգա, թե Հայաստանն ինչ դժվարությունների միջով ա անցնում, որ Է՛Լ խնդիրը լուծի, ու ավելի փափուկ կդառնա: Վանոյի սրտով չէր այդ նշանակումը, բայց ինձ մոտ երբեք կոշտ չէր արտահայտվում: Մի անգամ նստած խմում էինք, ասեց՝ հարցը լուծված ա, հայ ա, բայց հայաստանցի չի»:

Սամվել Մևոդան վերհիշում է 1998 թվականի հունվարին Վանոյի հետ ունեցած հանդիպումը.

«Զանգեց, ասաց՝ Ծաղկաձորի Գրողների միությունում եմ, արի: Գնացի, ռեստորանում մենակ նստած էր: Մի բան ասաց, լսվա

պես հիշում եմ: Բաժակ բարձրացրինք, ասաց. «Կար ժամանակ, որ մենք «Ղարաբաղ» կոմիտեի տղերքով տաբու էինք դրել, որ դրսից մարդ չպիտի թողնենք գա հանրապետության ղեկավարության մեջ, հայաստանցիներ պիտի լինեն: Բայց անցավ ժամանակ, հերթով սխալներ թույլ տվեցինք և այսօր կանգնել ենք այս իրավիճակի առաջ»:

Դրանից տառացիորեն մի քանի օր հետո Լևոնը հրաժարական տվեց: Վանոն գիտեր, որ այդպես է լինելու»:

Վանոն գլխավորում է ՀՀԾ-ն. Վազգենը «հակամարտում է» Արարքցյանի հետ

1997 թվականի ամռանը մի շարք կարևոր իրադարձություններ են տեղի ունենում: Հուլիսի 11-ին կայանում է ՀՀԾ համագումարը, որին բուռն քննարկումներ էին նախորդել:

Վանո Սիրադեղյանի և ՀՀԾ վերնախավի հակամարտությունն այլևս հանրային բնույթ էր ստացել. կողմերը հանդես էին գալիս փոխադարձ քննադատությամբ: Թեև Լևոն Տեր-Պետրոսյանը փորձում էր չեզոքություն պահպանել, պարզ էր, որ նա ցանկանում է Վանո Սիրադեղյանին տեսնել ՀՀԾ վարչության նոր նախագահի պաշտոնում: Այդպես էլ եղավ:

ՀՀԾ նախընտրական զարգացումներին զուգահեռ թեժ քննարկումներ էին ընթանում նաև Ազգային ժողովում:

Հունիսի 10-ին Ազգային ժողովում ներկայացնելով զինապարտության մասին օրինագիծը, որով նախատեսվում էր զորակոչել 18 տարին լրացած բոլոր տղամարդկանց և հրաժարվել ուսանողների համար նախատեսված տարկետումից, Վազգեն Սարգսյանը նշում է, որ այդ հարցի շուրջ արհեստական կրքեր են բորբոքում՝ փորձելով ներկայացնել որպես իր և Բաբկեն Արարքցյանի անձնական հակամարտություն: Մինչդեռ, ասում էր Վազգենը, Բաբկեն

Արարքցյանն իր համար այնքան մեծ հեղինակություն էր, որ նրան ասեր՝ հրաժարական տուր, ինքը պատրաստ էր հրաժարական տալ: Բարկեն Արարքցյանը ներկայացնում էր իր մշակած այլընտրանքային նախագիծը, որով նախատեսվում էր պահպանել տարկետումը: Նա չէր հերքում բուհերում առկա ստվերային խնդիրները, սակայն ՀԱԺ նախագահը շեշտում էր, որ մասնակի խնդիրներ կան նաև բանակում, բայց ոչ մեկի մտքով չի անցնում դա դարձնել Զինված ուժերի խնդիրը: «Գնացեք, տեսեք՝ ինչ ավտոմեքենաներ են կանգնած բուհերի մոտ. Չեմ ուզում կոնկրետ գերատեսչությունների անուն տալ: Բայց ով է առանձնատներ կառուցում՝ բուհերի ղեկավարները, թե այլ մարդիկ», հռետորական այս հարցադրումն էր անում Բաբկեն Արարքցյանը:

Այս կտրվի հաջորդ օրը Բարկեն Արարքցյանն իր հրաժարականն է ներկայացնում (որը մերժվում է ձայների մեծամասնությամբ)՝ նշելով, որ «շատ բիրտ ազդեցություն է կատարվել խորհրդարանի վրա»: Ի վերջո, խնդիրը կարգավորեց Լևոն Տեր-Պետրոսյանը՝ առաջարկելով, որ տարկետումից հրաժարվելու դրույթը ուժի մեջ մտնի մեկ տարի անց: Բայց, ինչպես ասվում է հայտնի անեկդոտում, «գողևները գտնվեցին, իսկ նստվածքը մնաց»: Այլևս ակնհայտ էր, որ երկրի ղեկավարության շարքերում սկզբունքային տարաձայնություններ կան:

Հովիկ Չարխչյանը պատմում է. «Երբեմն ապշում էիր, թե Վազգենն ինչպես էր վիճում իր շատ մտերիմ մարդկանց հետ՝ մինչև վերջ պաշտպանելով իր տեսակետը, ու դու հասկանում էիր, որ էս մարդը չի նահանջի: Մի անգամ զանգել էր Բարկեն Արարքցյանին: Թեև նրա հետ շատ ջերմ հարաբերություններ ուներ, բայց պետք էր տեսնել, թե ինչպես էին իրար հետ խոսում: Բայց հաջորդ պահին կարող էին շատ նորմալ շփվել»:

«Երկրորդական-երրորդական» կարևորության հարցեր

1997 թվականի օգոստոսի վերջին տեղի է ունենում Լևոն Տեր-

Պետրոսյանի պաշտոնական այցը Ռուսաստանի Դաշնություն, որի ընթացքում ստորագրվում է Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը, որը հայտնի է նաև հայ-ռուսական «Մեծ պայմանագիր» անունով: Նախագահին ուղեկցում են Վանոն և Վազգենը, որոնք փաստացի վերջին անգամ էին արտերկրում ներկայանում որպես մի թիմի անդամներ:

1997 թվականի սեպտեմբերին «Առավոտ»-ի թղթակից Արմեն Հայրապետյանը ծավալուն հարցազրույց է հրապարակում ՀՀԾ փոխտնօրեն Վանո Սիրադեղյանի հետ, որն արտատպում է նաև «Հայքը»: Պատասխանելով Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած իր տարաձայնությունների վերաբերյալ հարցին՝ Վանոն նշում է, որ անհնար է 7 տարի իրար հետ աշխատել ու տարաձայնություններ չունենալ: Սակայն շտապում է նաև հստակեցնել, որ սովորաբար դրանք ոչ թե սկզբունքային, այլ «երկրորդական-երրորդական» նշանակության հարցերի շուրջ են լինում:

Սակայն հաջորդ հարցին տված նրա պատասխանը նույնքան միանշանակ չէ: Երբ նրան խնդրում են մեկնաբանել «Իզվեստիա»-ին տված հարցազրույցում Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքերն այն մասին, որ ինքը ՆԳՆ-ից հեռացավ, քանի որ չկարողացավ կանխել համակարգի անօրինությունները, Վանո Սիրադեղյանն այս խոսքերով է արտահայտում իր սքողված անհամաձայնությունը. «Իմ սկզբնական ռեակցիան եղել է այն, որ ղեկավարի կարծիքը չենք քննարկում: Իսկ ինքն իմ ղեկավարն է: Հույս ունեմ՝ պատմության գնահատականը մի փոքր այլ կլինի»:

Վանոն «անիմաստ ենթադրություններ» է անվանում խոսակցություններն այն մասին, որ ինքը հանրապետության նախագահ դառնալու ցանկություն ունի: «Թեպետ իմ քաղաքական ընդդիմախոսներին զգաստ պահելու համար արժեր, որ այդ թեման սրծարծվեր»,- ավելացնում է նա: Բայց հետո ասում է. «Փառասիրության մի սահման կա, որից այն կողմ ես չեմ կարողանում անցնել: Ես իմ հնարավորությունների սահմանը գիտեմ: Բացի այդ՝

ասեմ, որ երբ որևէ դիվանագիտական, քաղաքական հանդիպում է նախատեսվում, արդեն մեկ շաբաթ առաջ տրամադրությունս ընկնում է: Այդ տիպի մարդը չի կարող նման ներկայացուցչական պաշտոնի գնալ»:

Զարմանալի չէ, որ 1994 թվականին, հյուրընկալվելով Էդվարդ Միլիտոնյանի հեռուստատեսային «Վերնատանը», Վազգեն Սարգսյանը նույնպես խոստովանել էր, որ պաշտոնական արարողակարգն իր սրտով չէ.

«Էդպես էլ երբեք չկարողացա նորմալ պաշտոնյայի պես հագնվել, նորմալ պաշտոնյայի պես քարտուղարուհի ունենալ, պրոտոկոլը պահպանել: Եղել է պահ, որ հանրապետության նախագահին ուղեցել է Մոսկվայում ինքնաթիռից 40 րոպե, Ռուսաստանի պաշտպանության նախարարն ու գլխավոր շտաբի պետը սպասել են 40 րոպե»:

Սիրադեղյան vs. Քոչարյան

Արմեն Ջաբարյանի հետ զրույցում Վանոն թերևս առաջին անգամ խոսում է վարչապետ Ռոբերտ Քոչարյանի հետ իր հարաբերությունների մասին: Ու թեև հերքում է խնդիրների առկայությունը, դրանք հնարավոր չէ չնկատել տողատակերում.

«Առաջին իսկ օրից սպասվում էր, որ այդպիսի լուրեր պիտի տարածվեն: Բայց այդ խոսակցությունները բացարձակապես հիմքեր չունեն: Այդ լուրերը մինչև իմ ՀՀԾ նախագահ դառնալն էին տարածվում: Մի նուրբ իրողություն կա. ես խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության նախագահն եմ և, փաստորեն, Պառլամենտի կողմից կառավարության վերադաս մարմնի ղեկավարներից մեկը: Բայց որպես քաղաքապետ՝ գործադիր իշխանության մեջ ենթակա եմ վարչապետին: Այս նուրբ իրողությունը կա. հարաբերություններն այնպես կառուցել, որ լարվածություն չլինի: Բնականաբար, ապագայում ինչ որ հարցեր կլինեն: Բայց այսօր նման խոսակցություններն անհիմն են, որովհետև մարդկային

այն տեսակը, որին պատկանում է Ռոբերտ Քոչարյանը, և որին պատկանում եմ ես, նույնն է: Ճիշտ է, ասում են, որ նույն տիպի մարդիկ մի քիչ դժվար են աշխատում իրար հետ, բայց այս դեպքում գործում է ոչ թե բնավորության, այլ խնդիրների գիտակցման առաջնայնության հանգամանքը: Վարչապետը բավականին սթափ մարդ է: Ես համոզված էի, որ նա ամենաուշը 6 ամսվա ընթացքում կտիրապետի Հայաստանի իրավիճակին: Այդպես էլ եղավ: Սոցիալական արդարության ընկալման իմաստով մենք բավականին նման ենք իրար: Սա շատ կարևոր հանգամանք է: Ես մինչև հիմա ոչ մի այնպիսի քայլ չեմ արել ու միշտ էլ հսկում եմ իմ վարքն ու գործունեությունը, որպեսզի վարչապետին անհնազանդության կամ նրա հետ հակամարտության տպավորություն չստեղծվի...]

[...Հիմա հասարակության մեջ մի քիչ լարվածություն կա՝ կապված Ղարաբաղից եկած կադրերի հետ: Այդ իմաստով մթնոլորտն այնքան էլ բարենպաստ չէ, և պետք է ամեն ինչ անել, որ վարչապետ-քաղաքապետ հարաբերությունների մակարդակում դա կասեցվի, հայաստանցի-ղարաբաղցի խնդիրը չլինի: Իհարկե, Ղարաբաղից եկած պաշտոնյաներն անզգույշ բաներ անում են, բնականաբար, հայաստանցիներն էլ են անում, այ դա ամենավտանգավորն է և՛ Հայաստանի, և՛, բնական է, ավելի շատ Ղարաբաղի համար: Եվ հատկապես այդ պատճառով ընդգծված լավ պիտի լինեն վարչապետի և քաղաքապետի հարաբերությունները: Ես դա շատ հստակ եմ գիտակցում»:

Սամվել Սևադայի այս պատմութունը, սակայն, հուշում է, որ հարցազրույցում ասված Վանոյի խոսքերը մինչև վերջ անկեղծ չեն.

«Քոչարյանը նոր էր վարչապետ դարձել. կառավարության նիստի օր էր: Ես Վանոյի մոտ էի, ասաց. «Սամո, գնամ, նիստին մասնակցեմ, գամ, կոֆե խմենք ու տեղ ունենք գնալու»: Նիստը սկսվում էր ժամը 10-ին: Արդեն 10-ն անց էր, պատուհանից տեսա, որ ոտքը դրել է մեքենայի վրա, կոշիկներն է կոճկում: Ուշացած գնաց ու շուտ եկավ: Անտրամադիր էր շատ, բայց ինձ բան չասաց: Գնացինք, այգում

նստեցինք, կոֆե խմեցինք: Հետո ուրիշից իմացա, որ ուշացած է մտել կառավարության նիստին, Քոչարյանը շատ չոր ասել է՝ ինչո՞ւ եք ուշանում: Ու Վանոն թողել, դուրս է եկել: Իրենց մեջ էդ լարվածությունը դրանից առաջ էլ եղել է»:

2018 թվականին հրատարակված իր «Կյանքն ու պայքարը» գրքում Ռոբերտ Քոչարյանը Վանո Սիրադեղյանին բնորոշում է որպես Հայաստանի ամենազդեցիկ մարդկանցից մեկը, «շատ էմոցիոնալ և կոլորիտային անձնավորություն».

«Նա ներքին գործերի նախարար էր դարձել քաոսի տարիներին, երբ վերաբերմունքը միլիցիայի նկատմամբ այնքան էր փչացել, որ մարդիկ չէին ցանկանում այնտեղ աշխատել, անգամ վախենում էին միլիցիայի համազգեստ կրելուց: ՆԳ նախարարի պաշտոնում Վանո Սիրադեղյանը կարողացավ վերականգնել կարգ ու կանոնը ու հարգանքը միլիցիայի նկատմամբ, բայց ինքը դարձավ խնդիր: Դասական իրավիճակ է, երբ հաղթելով հանցավորությանը՝ մարդը կորցնում է ներքին ամրանը, սկսում է իրեն օրենքից վեր համարել և, ի վերջո, ինքն է հանցագործ դառնում»,- գրում է Ռոբերտ Քոչարյանը:

Ճակատագրի հեգնանքով՝ Ռոբերտ Քոչարյանի այս բնորոշումը գրեթե նույնությամբ կրկնում է Լևոն Տեր-Պետրոսյանի հնչեցրած գնահատականը «Իզվեստիա»-ին տված հարցազրույցում:

Տեր-Պետրոսյանի ասուլիսը

1997 թվականի սեպտեմբերի 26-ին մամուլի հետ շփումներից խուսափող Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մեծ ասուլիս է հրավիրում, որի ընթացքում խոսում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը փոխզիջումների միջոցով կարգավորելու մասին և չի հերքում, որ այս հարցի շուրջ Ղարաբաղի իշխանությունների հետ տարաձայնություններ կան: «Բայց միաժամանակ ունենալով տարաձայնություններ, ունենալով երբեմն լարված պահեր՝ մենք միշտ կարողացել ենք համագործակցել և, ընդհանուր առմամբ,

այս տարիների ընթացքում մենք կարողացել ենք գտնել ընդհանուր եզրեր: Այսօր էլ, այո, կան տարբերություններ»:

Տեր-Պետրոսյանը նշում է, որ գոյություն ունի Ղարաբաղի հարցի լուծման հինգ տարբերակ :

«1. Սփյուռս-քվոյի կամ այսօր գոյություն ունեցող վիճակի հավիտենական պահպանումը:
2. Հայաստանի և Ղարաբաղի կողմից՝ որպես վերջնագիր, Ղարաբաղի անկախության պահանջը կամ Ղարաբաղի միացումը Հայաստանին: Ենթադրենք՝ ամբողջ աշխարհին ներկայացվում է նման վերջնագիր. միայն այս լուծումը և ուրիշ ոչինչ, որի դեպքում, իհարկե, Ղարաբաղը պատրաստ կլինի վերադարձնել գրավված տարածքները:
3. Հաջորդ տարբերակը պատերազմն է, եթե, իհարկե, Ղարաբաղն իվիճակի է ծնկի բերել, այսինքն՝ կապիտուլյացիայի ենթարկել Ադրբեջանին:

Դուք դատեք առայժմ այս երեք տարբերակների իրական լինել-չլինելու մասին: Դրանից հետո կխոսեմ ավելի իրական տարբերակների մասին:

Նախ՝ սփյուռս-քվոյի պահպանումը. ինչպես եք դա պատկերացնում: Ես արդեն նշեցի շրջափակման հետևանքով Հայաստանի համար առաջացած դժվարությունները: Դրան պետք է գումարել միջազգային հանրության հանգամանքը. ինչ է, միջազգային հանրությունը թույլ է տալու, որ 20 կամ 30 տարի պահպանվի այս վիճակը: Դա բացառված է, և միջազգային հանրությունը կգտնի ձևեր, միջոցներ՝ այնքան խեղճացնելու մեզ, որ ոչ միայն չկարողանանք ձեռք բերել այն, ինչ որ այսօր կարող ենք ձեռք բերել փոխզիջումների ճանապարհով, այլ շատ ավելի վատ վիճակի մեջ ընկնենք: Այդպես եղավ Բոսնիայում: Եթե Բոսնիայի սերբերը մեկ տարի առաջ համաձայնեին այն լուծմանը, որ նրանց առաջարկվում

էր, այսօր նրանք շատ ավելի լավ վիճակում կլինեին, և Խորվաթիայում կպահպանվեր սերբական Կրաինան: Ամեն ինչ կորցրին: Ուրեմն՝ ես չեմ գտնում, որ սփռատուս-քվոն ոեալ է պահպանել: Գուցե կարելի է համառել, կես տարի էլ, մեկ տարի էլ ձգձգել, բայց ի վերջո աշխարհի համբերության բաժակը կլցվի:

Երկրորդ՝ պահանջել միայն ու միայն անկախություն կամ միացում Հայաստանին և ուրիշ ոչ մի տարբերակ չընդունել: Սա, ըստ էության, նույն բանն է: Սա վերջնագիր է, և այս դեպքում միջազգային սանկցիաները շատ ավելի ազդեցիկ և էֆեկտիվ կլինեն:

Եվ երրորդ՝ պատերազմով. կարծում եմ՝ անհնար է, որ Ղարաբաղը կարողանա ծնկի բերել Ադրբեջանին, որովհետև դրա համար պետք է գրավի Բաքուն: Սակայն եթե նա փորձի ոչ թե Բաքուն, այլ թեկուզ մեկ շրջան էլ գրավել, աշխարհը դա թույլ չի տա: Կա մի սահման, այդ սահմանից այն կողմ արդեն համբերությունը հատում է»:

Այնուհետև նախագահը ներկայացնում է մնացած տարբերակները՝ փուլային և փաթեթային:

«Փաթեթայինը ենթադրում էր, որ միաժամանակ լուծվում են և գրավված տարածքների վերադարձման հարցը՝ բացի Լաչինի շրջանից, և խաղաղարար ուժերի տեղադրումը ղարաբաղա-ադրբեջանական սահմանին, և շրջափակումների վերացումը, և փախստականների վերադարձը իրենց բնակավայրեր, ինչպես նաև՝ բուֆերային, անջատիչ ու ոչ թռիչքային գոտիների ստեղծումը Ղարաբաղի ու Ադրբեջանի սահմանին: Դրանք չափազանց լայն գոտիներ են: Սա հարցի փաթեթային լուծման մի մասն էր: Մյուս մասը Ղարաբաղի կարգավիճակի ճշտումն է: Սա լուծման մեկ մեթոդոլոգիան է, և կրկնում եմ, գաղտնիք չեմ բացի, եթե ասեմ, որ առաջին անգամ

համանախագահները ներկայացրել էին նման՝ փաթեթային լուծման ծրագիր: Առաջին մասի նկատմամբ, ըստ էության, ոչ ոք լուրջ տարաձայնություններ չուներ: Երկրորդը՝ կարգավիճակը, կտրականապես մերժելի էր Ղարաբաղի համար և նույնքան կտրականապես մերժվեց Ադրբեջանի կողմից: Ադրբեջանը թյուր տպավորություն է ստեղծում, և կարծես թե միջնորդներն էլ շահագրգռված են այդ տպավորությունը տարածելու, որ իբր իրենք ընդունել են միջնորդների ներկայացրած առաջին ծրագիրը: Այդպես չէ: Ադրբեջանը նույնքան կատեգորիկ, կտրականապես մերժել է այդ ծրագիրը, ինչպես Լեռնային Ղարաբաղը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն ունեցել է շատ լուրջ վերապահումներ և այդ վերապահումները ներկայացրել է միջնորդներին:

Ըստ էության՝ ինչ տեղի ունեցավ: Միջնորդներն էլ, մենք բոլորս էլ համոզվեցինք, որ այսօր Ղարաբաղը և Ադրբեջանը պատրաստ չեն քննարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, որովհետև նրանցից յուրաքանչյուրն ունի այդ կարգավիճակի մասին իր սեփական պատկերացումը, որը կտրուկ հակադրվում է հակառակորդի տեսակետին: Այս հարցում բոլորը համոզվեցին: Եվ դրանից հետո, կարծում եմ, ընտրվեց միակ իրատեսական մոտեցումը. եթե լուծման նման տարբերակը չի ընդունվում, այսինքն՝ իրագործելի չէ, այսօր պետք է փորձ կատարել իրագործել լուծման «փուլ առ փուլ» տարբերակը: Ըստ էության՝ այդ փուլերն ընդգրկում են այն երկու բաղադրամասերը, որ կային փաթեթային լուծման ժամանակ, բայց դրանք ժամանակի մեջ իրարից հեռացվում են: Առաջին փուլում իրականացվում է այն, ինչ ես ասացի, իսկ կարգավիճակի հարցը, ըստ էության, հետաձգվում է մինչև այն ժամանակը, քանի դեռ չի իրականացել և չի կիրառվել առաջին փուլը»:

Տեր-Պետրոսյանի ասուլիսը դառնում է այն կետը, որից հետո անշրջելի իրադարձություններ են սկսվում ծավալել, իսկ Վանոն ու

Վազգենը հայտնվում են տարբեր ճամբարներում: Սակայն ասուլիսից մեկ ամիս անց, պատասխանելով «Հայաստանի Հանրապետություն» թերթի հարցերին, Վանո Սիրադեղյանը վստահություն է հայտնում, որ «ամեն ինչ կանցնի».

«Այս հարցում նոր բան չկա, բան չի փոխվել: Այսպես էր նաև երեք տարի առաջ: Այն ժամանակ էլ Ղարաբաղի դիրքորոշումը տարբերվում էր Հայաստանի դիրքորոշումից, և դա բնական է: Տագնապի համար որևէ պատճառ չկա: Ամեն ինչ կանցնի: Փոփոխություն չկա նաև նախագահի դիրքորոշման մեջ: Ինքը խոսում է բանակցությունները շարունակելու համար բանաձև գտնելու անհրաժեշտության մասին: Նույնը ասվում էր և երեք տարի առաջ, երբ ղարաբաղցիները խուսափում էին բանակցությունների սեղանի շուրջ նստելուց: Պարզ է, որ Ղարաբաղի դիրքորոշումը պետք է ավելի կոշտ լինի, որովհետև վտանգն անմիջապես իրեն է վերաբերում: Այդուհանդերձ, խուճապի առիթ չեմ տեսնում»:

Վազգենի նամակը նախագահին

1997 թվականի հոկտեմբերի 1-ին Վազգեն Սարգսյանը ծավալուն նամակով դիմել է ՀՀ նախագահին: 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունից հետո նամակը եղբոր չհրկիզվող պահարանում հայտնաբերել է այդ օրերին վարչապետի պաշտոնը ստանձնած Արամ Սարգսյանը: Նամակն առաջին անգամ հրապարակվել է «Առավոտ» թերթում 2001 թվականի մայիսի 9-ին:

> *«Ես դեմ եմ առաջին հերթին իրավիճակի քաղաքական, ավելի ճիշտ՝ գաղափարական մեկնաբանմանը.*
>
> *– «Հանուն ժողովրդի» կարգախոսով նույն ժողովրդից ուզում ենք խլել փաստացի, նույնիսկ հազարամյա դժվարագույն պայքարի ամենամեծ, թերևս միակ ձեռքբերումը՝ պատերազմական հաղթանակները:*

– Ուղղակի թե անուղղակի պատճառաբանելով մեր բոլոր թերացումները սոցիալական, տնտեսական, քաղաքական հողի վրա պատերազմով՝ ժողովրդի հավաքական ընկալմամբ «Ղարաբաղյան չլուծված հարցով», մենք ժողովրդի ընչազուրկ մասի, ասել է թե՝ մեծամասնության մեջ թշնամանք ենք սերմանում իր մի մեծ հափշտակի, պատերազմի և պայքարի նկատմամբ ընդհանրապես: Իսկ պատերազմի նկատմամբ մասսայական ատելությունը հղի է համընդհանուր կործանման վտանգով: Բանակի քայքայմամբ:

– Մեր պայքարն առաջին իսկ օրից անհնարինը հնարավոր դարձնելու, հավատի, ոգևորության, ոչ ստանդարտ լուծումների պայքար էր:

Այլապես, երիցս ճիշտ էին 88-ի կոմունիստ ղեկավարները իրենց «իրատես», կրավորական քաղաքականությամբ:

Այլապես, ինչի՞ համար էին այդքան զոհերն ու զոհողությունները:

Ճիշտ էին Բագրատիչները իրենց հայտնի փիլիսոփայությամբ:

«Լևոն Հակոբիչը, Վազգեն Միխայլիչը... միտք, ուղեղ, ճանապարհը ճիշտ... միայն թե Ղարաբաղը չլիներ, մի քանի լկտի դեպուտատներ չլինեին»...

Սա զավեշտ էլ կմնար, եթե այսօր քաղաքական մտածողություն դառնալու ողբերգական հեռանկար չունենար: մեծագույն թյուրիմացություն է այս պատերազմը «ղարաբաղյան» անվանելը:

Սա Ամենայն Հայոց Պատերազմ է: Անկասկած՝ վերջինը:

Անկասկած՝ ամենահաջողը մեր պատմության մեջ:

Վերջին անգամ երբ է եղել, երբ մենք մեր կենաց-մահու պատերազմը մեր մայրաքաղաքների մատույցներում չմղենք...

Այսօր Օմարի գագաթին կանգնած զինվորը, այո, Երևանն է պաշտպանում: Մեր հայրենիքը, ցավոք, այնքան փոքր է, որ մեկ նորմալ պարտությունը ոչ թե Ստեփանակերտն է տակովը անելու, այլև Զանգեզուրն ու Սևանը: Եվ այս պայմաններում ափել մեր՝ փաստորեն հաղթանակած պատերազմը...

Ոչ մի ժողովուրդ, թերևս, պատերազմ չի սիրել (մասնակի բացառություններով), բայց յուրաքանչյուր առողջ, ապրելու արժան ժողովուրդ պարտավոր է հարգել պատերազմը:

Վերջապես բերեք ամենասթափ հաշվարկով ծանրութեթև անենք, թե ինչ է փվել և առել մեզանից այս չարչրկված պատերազմը: Բոլոր իմաստներով և կտրվածքներով վերարժեքավորենք: Մեղրու, Կապանի, Վարդենիսի ու Մասիսի ազատագրումից սկսած մինչև Շուշի ու Լաչին... ազգային արժանապատվության վերականգնումից մինչև անկախ պետականության վերականգնումն ու պահպանումը, մինչև տարածաշրջանային ու գեոպոլիտիկ փաստ ու փաստարկ:

Ձերբազատվենք պատերազմից, ձերբազատվենք Ղարաբաղից...

Ինչպես, եթե դա արդեն մի ամբողջ սերնդի կյանք ու պատմություն է՝ պսակված փասնյակ հազարավոր զոհերի արյամբ ու հիշողությամբ, հարյուր հազարավոր մարդկանց ճակատագիր ու կյանքի նպատակ:

Հանուն ինչի, եթե մեր պատմության մեջ երբեք ավելի մոտ չենք եղել մեր վերջնական հաղթանակին, քան այսօր:

Եթե, ակնհայտ փաստ է, որ առաջիկա երկու-երեք տարիների

ընթացքում գոնե թշնամին ի վիճակի չի լինելու մեր նկատմամբ ռազմական գերակշռություն ունենալ:

Եթե սպառված չեն, ամենևին մոտ չեն սպառմանը տնտեսական ու քաղաքական ակնհայտ քայլերը: Այո, սպառված չեն:

Տնտեսության, ներքին կարգ ու կանոնի վերականգնմանն ուղղված քայլերը նույնիսկ սաղմնավորման ընթացքի մեջ են և արդեն լուրջ արդյունք են տալիս: Կարող ենք վիճել այս մասին, բայց ակնհայտ է, որ տնտեսական քաղաքականության ուղղությամբ ոչ մի բարեփոխում չի կատարվել. նախկինում մեր աչքը Մոսկվայի պետպլանի վրա էր, այսօր՝ ՄԱՀ-ի: Եվ եթե պետպլանի փողերով Հայաստանը դարձավ հզոր արդյունաբերական, թեկուզ և Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, ապա ՄԱՀ-ի փողերով մենք առ այսօր ոչ մի քար չենք ավելացրել մեր անկախ Հանրապետության շենքին: Եվ չենք ավելացնի, քանի դեռ չենք համոզվել, որ մենք նորմալ ներուժ ունեցող երկիր ենք և կարող ենք, պարտավոր ենք աշխատեցնել սեփական տնտեսությունը:

Չէ որ մենք էինք 88-ին ժողովրդին բացատրում, թե սարսափելի ոչինչ չկա, 7-8 գործարան աշխատեցնելով՝ կարող ենք երկիրը պահել:

Ոչ մի արտառոց բան չի պատահել. փակվեցին ադրբեջանական ճանապարհները, բացվեց պարսկականը: Իսկ Թուրքիայի հետ հաղորդակցություն մենք երբեք չենք ունեցել: Ուկրաինան ու Վրաստանն ու մյուսները Ղարաբաղ ու բլոկադա չունեն, բայց մեզանից վատ վիճակում են:

Ճիշտ լուծումների ու հետևողականության, կարգ ու կանոնի խնդիր է վերջապես:

Վախենում ենք միջազգային հանրության, աշխարհի հզորների

կարծիքից...

Բայց չէ որ մենք ավելի մեծ ճնշումների ենք դիմացել: Մեր խելացի, ճկուն արտաքին քաղաքականությունը 91-94 թթ. փոթորկալի տարիների միջից մեզ անվնաս հանեց խաղաղ ափ, որ հետո մեր ներսի անհամաձայնությունների ու փնտրեսական գծով նավավարի տեղակալների անպտուղ աշխատանքի պատճառով զինաթափի և հանճնի թշնամուն...

Չենք ուզում հանձնվել:

Աշխարհի հզորների ճնշումն էլ վերջապես կրիտիկական աստիճանի չի հասել: Հասնի էլ, հերն անիծած, չէ որ մենք էինք 88-ին ժողովրդին համոզում, որ մեր փրկությունը մեր հավաքական ուժի, դիմադրության մեջ է: Որ երբեք հայերիս նկատմամբ ավելի բարենպաստ միջազգային կարծիք, կարեկցանք չի եղել, քան 20-րդ դարասկզբին, բայց դա չխանգարեց, որ հենց 20-րդ դարի սկզբին մեզ միլիոնով կոտորեն: Խլեն մեր երկրի մեծագույն մասը, և այսօր նույն միջազգային կարծիքը մշակեն՝ մեզ ագրեսոր ճանաչել...

Որ վճռական մենակը բոլոր հնարավոր ելքերը գտնում է, որ պարտվողը կարեկցանք է նվաճում, իսկ հաղթողը՝ բարեկամներ...

Եվ ճիշտ էինք ասում:

Եվ այդ պատճառով մեզ, ավելի շուտ Ձեզ հավատացինք:

Ի՞նչ եմ առաջարկում... Ակնհայտ բաներ: Ակնհայտ ու պարզ բաներ:

Համախմբվել ազգովի Հայրենիքում՝ Հայաստանում:

Համախմբվել ազգովի Հայաստանի Հանրապետությունից դուրս:

Կենտրոնացնել մեր տնտեսական, քաղաքական, մտավոր ներուժը ամբողջ աշխարհում: Եվ դա ուտոպիա չէ: Դա հնարավոր է և անհրաժեշտություն: Դրական տեղաշարժեր կան:

Առավելագույնի հասցնել մեր համազգային, համաշխարհային դիմադրողականությունը»:

Վազգենը նամակը նախագահին էր փոխանցել Լևոն Զուրաբյանի միջոցով:

«Տեր-Պետրոսյանի ասուլիսից հետո Վազգենը զանգեց ինձ և խնդրեց նախագահին փոխանցել իր մտահոգությունները: Երբ հարցրի, թե ինչու անձամբ չի փոխանցում, ասաց, որ քանի որ լարվածությունը մեծ է, մտավախություն ունի, որ կարող է որևէ անզգույշ բան ասել և ավելորդ անվստահություն մտցնել հարաբերությունների մեջ: Ասաց նաև, որ բանակում և երկրապահների շրջանում ասուլիսը շատ վատ է ընկալվել, և պետք է, որ նախագահը տեղյակ լինի դրա մասին: Ասացի. «Վազգե՛ն, բայց չէ որ նախագահը մշտապես խոսել է փոխզիջումների մասին, միայն Ղարաբաղը և Հայաստանի հետ կապող ամբողջ Լաչինի շրջանը պահելու մասին, և այս առումով որևէ բան չի փոխվել»: Վազգենն էլ ասաց, որ այո, խոսել է, «բայց ես միշտ կարծել եմ, որ դա ընդամենը դիվանագիտություն է, իսկ հիմա ես հասկացա, որ ինքը իսկապես դա ուզում է անել»»:

Տեր-Պետրոսյանի հոդվածն ու հակասությունների սրումը

1997 թվականի նոյեմբերի 1-ին լույս է տեսնում Լևոն Տեր-Պետրոսյանի «Պատերազմ, թե խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը, որտեղ նա առավել մանրամասնում է իր դիրքորոշումը Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում:

Այս շրջանում Վազգեն Սարգսյանն իր կարծիքը հանրային տիրույթում չի հայտնում, բայց մի շարք վկայությունների համաձայն՝ այդ ընթացքում նա ձեռքերը ծալած չի նստում: 1997 թվականի սեպտեմբերին, նախքան Տեր-Պետրոսյանի հայւ ասուլիսը, Ժիրայր Լիպարիտյանը թողնում է նախագահի գլխա խորհրդականի պաշտոնը.

«Երբ արդեն հայտնի էր, որ պիտի գնամ, Տեր-Պետրոսյանն առաջարկեց, որ բոլորս միասին ընթրենք,- հիշում է Ժիրայր Լիպարիտյանը:- Իմ մեկնելուց երկու օր առաջ հավաքվեցինք ՆԳՆ ընդունելությունների տանը: Կերանք, խմեցինք: Դե, Լևոնը չէր խմում: Շատ ծանր երեկո էր: Վերջում Վազգենի հետ երկուսով մնացինք: Լավ խմեցինք: Վազգենն ասաց. «Դու չես կարող գնալ, ծրագրերդ չգիտեմ, բայց էս գիշեր քեզ գեներալի կոչում եմ տալու, և եթե գնաս, քեզ որպես դասալիք պիտի գնդակահարեն»: Մեկ րոպե հետո ասում է. «Դուք՝ Լևոնը, Բաբիկը, դու, հսկայական գործ եք արել, ձեր ուղեղները միասին գործեցին, ուրիշները դա չէին կարող անել: Բայց ձեր ժամանակն անցած է: Ուղեղով աշխատելու ժամանակն անցած է, հիմա եկել է դուխով աշխատելու ժամանակը»:

Դրանից մեկ-երկու ամիս առաջ ես զգում էի, որ Վազգենի խոսույթը փոխված է,- հավելում է Լիպարիտյանը,- որ իր մոտ կասկածներ և հարցեր կան Ղարաբաղի հարցի կապակցությամբ: Եվ ես երկու անգամ Լևոնին զգուշացրել եմ այդ մասին, ինչը նախկինում երբեք չէի արել: Լևոնը սկզբում չհավատաց: Հետո ինձ ասաց, որ Վազգենի հետ խոսել է, և խնդիր չկա: Ասացի. «Լևոն, դու իր հետ չես խմել: Դու կարծում ես, որ մենք խմում և ապուշանում ենք, բայց մենք նաև անկեղծանում ենք: Վազգենի հետ քո խոսելու ձևն այնպիսին է, որ ինքն իրեն պարտադրում է, որ մտքին եղածն ամբողջությամբ քեզ չասի»: Հետո եղավ այս վերջին երեկույթը, և մտածում էի դարձյալ Լևոնին ասել, բայց կարծեցի, որ կարիք չկա նույն բանը երրորդ անգամ ասել, և չասացի»:

Նույն շրջանի բացահայտումներին է անդրադառնում Աշոտ

Ոսկանյանը.

«Ժիրայր Լիպարիտյանն ինձ պատմեց Տեր-Պետրոսյանի խոսքերն այն մասին, որ Վազգենն իրեն երբեք չի դավաճանի: Լիպարիտյանը նախագահին ասել էր՝ երբևիցե փորձել ես նստել, Վազգենի հետ ամբողջ գիշեր խմել և առավոտյան տեսնել, թե ինքն ինչ է ասում»:

Լևոն Տեր-Պետրոսյանի և Վազգեն Սարգսյանի միջև դանդաղ, բայց անդառնալիորեն հասունացող հակամարտության իր կանխազգացումն է հիշում Տիգրան Հակոբյանը ռուս լրագրողների հետ բարեկամական խնջույքի այս դրվագում.

«1997 թվականի նոյեմբերին ռուսական խմբագիրների լուրջ դեսանտ էր եկել: Վազգենը ինձ կանչեց, լավ կերանք, խմեցինք Մանվելի «ֆազենդայում»: Մի պահ Վազգենն ու Անդրանիկ Միհրանյանն առանձնացան ու սկսեցին խոսել: Ես էլ գնում-գալիս էի, և դուրս չեկավ՝ Վազգենը շատ ջղայնացած ու բորբոքված էր: Քանի որ ես Լևոնին պաշտում էի, գնացի իր մոտ ու ասացի՝ պրոբլեմ կա: Նա էլ ասաց, թե «ինչ ես խոսում, ոնց կարա Վազգենը դեմ լինի»:

Հիշում է Արա Թադևոսյանը.

1997 թվականի հունիսից ժամկետային ծառայություն էի անցնում Պաշտպանության նախարարության «Հայ գինվոր» պաշտոնաթերթում: Դեկտեմբերին՝ շաբաթ օրը, առավոտյան, զանգեցին խմբագրությունից և ասացին, որ Վրեժ Իսրայելյանը շտապ կանչում է:

Խմբագրություն եկա ու մտա իր մոտ:

- Վազգենն էր զանգել, հարցնում էր՝ դու ճարպիկ տղա ես:

- Ինչ իմաստով «ճարպիկ», պարոն Իսրայելյան:

- Դե, ասաց, որ մի քանի օրից Մոսկվա է մեկնելու, ուզում է քեզ հետը տանել:

- Ինչի՞ համար:

- Գնա նախարարություն, նախարարը քեզ ամեն բան կասի: Իհարկե, խառնվեցի իրար: «Հայ զինվոր»-ում մենք ծառայում էինք «ջերմոցային» պայմաններում, սակայն միևնույն է, ես շարքային Արա Թադևոսյանն էի, որը պետք է գնար պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի մոտ:

Դուռը ծեծեցի, բացեցի, ասացի. «Թույլ կտա՞ք, պարո՛ն նախարար»:

Վազգեն Սարգսյանը լայն ժպտաց, ձեռքով արեց ու ասաց. «Ներս արի, նստի»:

Նստեցի: Ասաց՝ ծխո՞ւմ ես: Ամաչելով ասացի՝ այո (այն ժամանակ ծխում էի): Ծխախոտ հյուրասիրեց ու ինքն էլ իր կրակայրիչով վառեց: Շոկի ու պարծանքի խառը զգացում ունեի: Մի կողմից երազում էի, թե ոնց եմ երեկոյան փղերքին պատմելու, որ նախարարը ինձ սիգարետ հյուրասիրեց: Մյուս կողմից հասկանում էի, որ կարևոր բան է ասելու, ու վստահ չէի՝ արդյոք կարողանալո՞ւ եմ կատարել:

Վազգեն Սարգսյանը պատմեց, որ վերջերս Երևանում հանդիպել էր ռուսաստանյան լրատվամիջոցների ղեկավարների պատվիրակությանը ու մի քանի օրից մեկնելու է Մոսկվա և ուզում է, որ ես հանդիպեմ այդ մարդկանցից մի քանիսի հետ ու նրանց ամանորյա նվերներ հանձնեմ:

- Պետք է նրանց ասել, որ հիմա մեր երկիրը բավական բարդ ժամանակաշրջան է մտնում, և միշտ չէ, որ մեր Զինված ուժերում համամիտ են քաղաքական ղեկավարության հետ

Լեռնային Ղարաբաղի հարցում:

Իհարկե, զարմացա: Բայց միաժամանակ շատ մեծ նշանակություն չտվեցի. ինձ մտքով կարող էր անցնել, որ մոտ մեկ ամիս անց ՀՀ նախագահը հրաժարական է տալու «հայկնի ուժերի» պահանջով:

- Կարող ես այդ գործն անել:

- Կարծում եմ՝ կարող եմ, պարոն նախարար:

- Դե շատ լավ, ուրեմն դու ու Միսոն երկու օրից կմեկնեք Մոսկվա, ես էլ հաջորդ օրը կգամ:

Այդտեղ նորից շոկ ապրեցի: Մեսրոպ Գեղագույանը՝ Միսոն, նախարարի համիարզն էր ու թիկնապահը: Նրանից բանակում ու ոչ միայն բանակում վախենում էին շատ-շատերը: Չէի պատկերացնում, թե ինչպես ես՝ սովորական շարքայինս, պետք է Մոսկվա մեկնեի Միսոյի հետ: Ավելին՝ Մոսկվայում Միսոյի հետ պետք է մնայինք հյուրանոցի նույն համարում:

Մոսկվայում աշխատանքս հետևյալն էր. առավոտյան ինձ հատկացված մեքենայի բեռնախցիկը դնում էինք 3-4 արկղ «Նաիրի» կոնյակ (ամանորյա նվեր նախարարից) ու գնում հանդիպումների:

Նախարարը Մոսկվա եկավ մեր ժամանելու հաջորդ օրը, և երեկոյան մտա իր մոտ՝ զեկուցելու հանդիպումների ու դրանց արդյունքների մասին: Հրաժեշտ տալուց առաջ ասացի.

- Պարոն նախարար, ամեն տեղ այնպես լավ են ընդունում:

Չեռքը դրեց ուսիս, ամուր սեղմեց ու ժպտալով ասաց այս բառերը, որոնք կհիշեմ միշտ.

- Որովհետև մենք հաղթած երկիր ենք:

Մոսկվայում մնացինք 2 կամ 3 օր. ամեն երեկո հանդիպում էի Վազգեն Սարգսյանի հետ ու պատմում հանդիպումներիս մասին: Ապրում էինք զինվորական մի հյուրանոցում, որտեղ նախաճաշ նախատեսված չէր: Դրա մասին հոգ էր տանում Մոսոն, ով առավոտյան սառնարանից հանում էր տարբեր ուտելիքներ ու ինձ հրավիրում նախաճաշի: Ու կրկին մտածում էի. «Տղերքը տեսնեին, էլի, թե ինչպես է ամենակարող Մոսոն շարքային Թադևոսյանի համար նախաճաշ պատրաստում»:

Ժիրայր Լիպարիտյանի կարծիքով՝ ի տարբերություն Վանոյի՝ Վազգենը քաղաքական գործընթացների մասին լավ պատկերացում չուներ: «Վազգենն իրեն համարում էր հաղթանակի ճարտարապետներից մեկը: Թերևս ինքը կարծում էր, որ հիմնական ճարտարապետն էր: Բայց ես գիտեմ, որ ռազմավարական որոշումները կայացրել է Տեր-Պետրոսյանը: Բայց երբ իրեն համոզեցին, որ ինքը սպարապետ է, պատմության հանդեպ իր հավատարմությունը ավելի կարևոր գտնվեց, քան Լևոնի հանդեպ հավատարմությունը»,- մեկնաբանում է Ժիրայր Լիպարիտյանը:

Լևոն Զուրաբյանը պատմում է, որ շուրջ երկու ամիս իր միջոցով Տեր-Պետրոսյանի հետ շփվելուց հետո Վազգենն առանձին հանդիպում ունեցավ նախագահի հետ, ու նրանք շատ երկար, մոտավորապես չորսժամանոց առանձնազրույց ունեցան.

«Այդ զրույցից հետո Վազգենը դուրս եկավ լուսավորված: Եկավ նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանի սենյակ և մեզ ասաց՝ նախագահը ճիշտ է, սա միակ ճիշտ ճանապարհն է,- հիշում է Զուրաբյանը,- բայց հետո նորից կարողացան նրան համոզել. չգիտեմ, թե ինչ եղավ: Մի օր եկավ, ասաց՝ չէ, բայց այս լուծումը չի կարող ընդունելի լինել: Ես էլ նրան մի փոքր պրիմիտիվ բան ասացի, որ մեր պատմության ընթացքում խնդիրները մշտապես ծագել են այն ժամանակ, երբ իշխանները

– Որովհետև մենք հաղթած երկիր ենք:

Մոսկվայում մնացինք 2 կամ 3 օր: Ամեն երեկո հանդիպում էի Վազգեն Սարգսյանի հետ ու պատմում հանդիպումներիս մասին: Ապրում էինք գինվորական մի հյուրանոցում, որտեղ նախաճաշը նախապատված չէր: Դրա մասին հոգ էր տանում Միտոն, ով առավոտյան սառնարանից հանում էր տարբեր ուտելիքներ ու ինձ հրամիրում նախաճաշի: Ու կրկին մրցածում էի: «Տղերքը պետներին, էլի, թե ինչպես է ամենավարող Միտոն շարքային Թադևոսյանի համար նախաճաշը պատրաստում»:

Ժիրայր Լիպարիտյանի կարծիքով՝ ի տարբերություն Վանոյի՝ Վազգենը քաղաքական գործընթացների մասին լավ պատկերացում չուներ: «Վազգենն իրեն համարում էր հաղթանակի ճարտարապետներից մեկը: Թերևս ինքը կարծում էր, որ հիմնական ճարտարապետն էր: Բայց ես գիտեմ, որ ռազմավարական որոշումները կայացրել է Տեր-Պետրոսյանը: Բայց երբ իրեն համոզեցին, որ ինքը սպարապետ է, պատմության հանդեպ իր հավատարմությունը ավելի կարևոր գտնվեց, քան Լևոնի հանդեպ հավատարմությունը»,- մեկնաբանում է Ժիրայր Լիպարիտյանը:

Լևոն Զուրաբյանը պատմում է, որ շուրջ երկու ամիս իր միջոցով Տեր-Պետրոսյանի հետ շփվելուց հետո Վազգենն առանձին հանդիպում ունեցավ նախագահի հետ, ու նրանք շատ երկար, մոտավորապես չորսժամանոց առանձնազրույց ունեցան:

«Այդ զրույցից հետո Վազգենը դուրս եկավ լուսավորված: Եկավ նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանի սենյակ և մեզ ասաց՝ նախագահը ճիշտ է, սա միակ ճիշտ ճանապարհն է,- հիշում է Զուրաբյանը,- բայց հետո նորից կարողացան նրան համոզել. չգիտեմ, թե ինչ եղավ: Մի օր եկավ, ասաց՝ չէ, բայց այս լուծումը չի կարող ընդունելի լինել: Ես էլ նրան մի փոքր պրիմիտիվ բան ասացի, որ մեր պատմության ընթացքում խնդիրները մշտապես ծագել են այն ժամանակ, երբ իշխանները

որոշել են թագավորի դեմ դուրս գալ: Ասացի, որ ոչ ոք անսխալական չէ, և մենք չգիտենք, թե ում տեսակետն է հաստատ ճիշտ: Բայց հենց այդ դեպքերում է կարևորվում նախագահի դերը, որը ստանձնում է պատասխանատվությունը և վերջնական որոշում կայացնում: Ու Վազգենն ինձ պատասխանեց. «Ընդհանուր առմամբ՝ դու ճիշտ ես, եթե մենք ուզում ենք նորմալ պետություն ունենալ, նախագահին պետք է լսել. ճիշտ թե սխալ՝ վերջին ատյանն ինքն է: Բայց այս հարցում ես այդ մոտեցմանը հավատարիմ մնալ չեմ կարող, քանի որ Ղարաբաղի խնդիրը միակ հարցն է, որտեղ որևէ առանձին վերցրած մարդ չի կարող որոշում կայացնել, անգամ՝ նախագահը: Սա այն հարցն է, որը պետք է որոշի ամբողջ ազգը,- պատմում է Լևոն Զուրաբյանը և շարունակում,- ես հարցրի, թե ինչպես է նա պատկերացնում ազգովի որոշում կայացնելու մեխանիզմը, բայց այդ հարցին նա պատասխան չուներ»:

1997 թվականի ավարտին՝ դեկտեմբերի 27-ին, «Հայաստանի Հանրապետություն» թերթում լույս տեսավ Վրեժ Իսրայելյանի ծավալուն հարցազրույցը Վազգեն Սարգսյանի հետ, որում պաշտպանության նախարարն ամփոփում էր անցնող տարին: Ու թեև հարցազրույցում ոչինչ չէր ասվում Տեր-Պետրոսյանի հետ ունեցած անհամաձայնության մասին, Վազգենը կամա թե ակամա պատասխանում էր նախագահի «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածին.

«Աշխարհի ոչ մի ժողովուրդ պատերազմ չի սիրում, չկա նաև մի այնպիսի ժողովուրդ, որ չհարգի իր ազատագրական պատերազմը: Այդպիսի ժողովուրդները վտարվելու են պատմության ընթացքից: Չի կարելի բոլոր դժվարությունները և ծանրությունները պատերազմով բացատրել: Այս պատերազմը մինչև այս պահը մեզ ավելին է տվել, քան վերցրել է: Եթե մենք ազգովի հանկարծ ատենք մեր պատերազմը, պարտության վտանգը ավելի կմոտենա մեզ: Ազգովի պատերազմի նկատմամբ ատելությունը կհանգեցնի ազգի կործանման, բանակի քայքայման: **Եթե պատերազմը քոնն է, խաղաղությունն էլ քոնը կլինի:»**

Անվտանգության խորհրդի նիստը

1998 թվականի հունվարի 7-ին և 8-ին Հայաստանի և ԼՂՀ բարձրագույն ղեկավարության մասնակցությամբ տեղի է ունենում ՀՀ Անվտանգության խորհրդի նիստ, որին մասնակցում են Լևոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գագիկ Հարությունյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը, Արկադի Ղուկասյանը, Լեոնարդ Պետրոսյանը, Օլեգ Եսայանը, Սամվել Բաբայանը, Արա Սահակյանը, Կարապետ Ռուբինյանը, Տեր-Հուսիկ Լազարյանը, Վարդան Օսկանյանը, Շահեն Կարամանուկյանը, Լևոն Զուրաբյանը, Հովհաննես Իգիթյանը, Բագրատ Ասատրյանը:

Հունվարի 8-ի նիստում Տեր-Պետրոսյանը նշում է, որ նախքան իր բուն ելույթին անցնելը, ավելորդ չի լինի ամփոփ ձևով ներկայացնել երկու օրվա ընթացքում այդտեղ հնչած որոշ կարծիքներ, որոնք կարևոր են քննարկվող հարցի համակողմանի լուսաբանման տեսակետից:

Ստորև ներկայացնում ենք Տեր-Պետրոսյանի առանձնացրած այդ կարծիքները, որոնց հեղինակը համ համահեղինակը Վազգեն Սարգսյանն է.

«Շրջափակումները չեն ազդում Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Ամեն ինչ կախված է կառավարության աշխատանքի ճիշտ կազմակերպումից և ուժերի մոբիլիզացիայից» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան):

«Հայաստանի բյուջեն կարելի է երկու-երեք անգամ մեծացնել՝ պայքարելով ստվերային տնտեսության դեմ և խստացնելով հարկերի հավաքման պրոցեսը» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան):

«Սփյուռք-Հայաստան հարաբերությունների սերտացման դեպքում

Սփյուռքից կարելի է ստանալ տարեկան 400–500 միլիոն դոլարի օգնություն» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան):

«Հնարավոր չէ Հայաստանը լրիվ մեկուսացնել: Մեզ կօգնեն Ռուսաստանը և Իրանը: Իսկ եթե ինչ-ինչ պատճառներով Ռուսաստանը դադարեցնի զենքի մատակարարումը, ապա մենք զենք կստանանք Իրանից» (Վ. Սարգսյան):

«Ղարաբաղյան կարգավորման գործընթացում պետք է վարել ակտիվ սառեցման քաղաքականություն» (Վ. Սարգսյան, Ս. Սարգսյան):

«Ղարաբաղի հարցում հիմա կարիք չունենք փոխզիջման գնալու: Կզիջենք այն ժամանակ, երբ հարկադրված կլինենք» (Վ. Սարգսյան):

«Կյանքն ու պայքարը» գրքում Ռոբերտ Քոչարյանը խոստովանում է, որ Անվտանգության խորհրդի նիստում իրեն «չափից դուրս կտրուկ է պահել».

«Իմ և իմ համախոհների համար Ղարաբաղը կյանքի գործ էր, իսկ նիստին ներկաներից շատերի համար՝ գլխացավանք, որից իրենք հոգնել էին: Ես, թերևս, չափից դուրս կոպիտ էի սաստում նրանց՝ առաջարկելով քիթները չխոթել մի խնդրի մեջ, որը նրանք չեն հասկանում և չեն զգում: Ես կոնֆլիկտ չէի փնտրում, պարզապես չէի կարող հանգիստ խոսել: Այս տաքացած քննարկումների ընթացքում ինձ ակտիվորեն աջակցեցին Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը և, իհարկե, Ղարաբաղի ղեկավարները: Տեսնում էի, թե ինչ դժվար է Վազգենի համար առաջին անգամ հակաճառել մի մարդու, ում առաջնորդությունն ինքն անվերապահորեն ընդունում էր երկար տարիներ, ինչ ներքին ջանքեր նրանից պահանջվեցին, որպեսզի կարողանա հաղթահարել Տեր-Պետրոսյանի ազդեցությունը»:

Լևոն Զուրաբյանը հիշում է նիստի ժամանակ Վանոյի և Վազգենի միջև ծագած վեճը.

«Վազգենն ասում էր, որ «զորքերը դուրս բերելով այդ շրջաններից՝ մենք կոտրում ենք մեր բանակի կամքը», «բանակը չի կարող նահանջել»: Վանոն էլ հակադարձեց՝ ինչ է նշանակում «բանակի կամք», բանակը կամք ունենալու իրավունք ունի: Բանակը պետության գործիքն է. ասում ես՝ հարյուր մետր առաջ գնա, պիտի գնա, ասում ես՝ մեկ կիլոմետր հետ գնա, պիտի գնա:

Կյանքը ցույց տվեց, որ Վազգենի և Վանոյի հարաբերությունները որոշակի քաղաքական սահման ունեին: Ինչ-որ պահի Վազգենը փաստացի ընտրություն կատարեց՝ զոհաբերել Վանոյին»:

Իրավիճակը պայթյունավտանգ է դառնում

Հունվարի 18-ի երեկոյան հայտնի է դառնում, որ Արմավիր-Երևան մայրուղու վրա անհայտ անձինք կրակ են բացել ՀՀ նախագահի պահպանության վարչության պետ, գեներալ-մայոր Ռոմեն Ղազարյանի մեքենայի վրա: Վերջինս մարմնական վնասվածքներ չի ստացել:

Հունվարի 20-ին մահափորձ է կատարվում Ավանի համայնքապետ Ռուբեն Հայրապետյանի նկատմամբ:

Հունվարի 20-ի լույս 21-ի գիշերը մահափորձ է կատարվում ներքին զորքերի հրամանատար Արծրուն Մարգարյանի նկատմամբ, նա վիրավորում է ստանում ոտքերի հատվածում:

Հունվարի 21-ին ՀՀԾ վարչությունը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասվում է, որ սատար կկանգնի ՀՀ նախագահին, բայց միաժամանակ «առաջարկում է վճռական քայլեր ձեռնարկել ծայր առած ահաբեկչությունը կանխելու ուղղությամբ»:

Նույն օրը Վանո Սիրադեղյանը հայտարարում է. «Մենք վարչապետի հրաժարական չենք պահանջում: Պահանջում ենք, որ նախագահը սահմանադրական կարգի բերի գործադիր

իշխանության գործունեությունը: Արտակարգ դրություն մտցնելու կարիքը չեմ տեսնում, եթե գործադիր իշխանությունը կատարի իր գործառույթները: Չնայած ինչ իմանաս: Կարծում եմ՝ կարելի է կանխել դեպքերի այնպիսի ընթացքը, որոնք արտակարգ դրությունն անհրաժեշտ կդարձնեին»:

Երբ «Առավոտ»-ի թղթակից Աննա Իսրայելյանը հարց է տալիս միջոցների մասին, Վանոն ասում է. «Ես գիտեմ ձևերը, բայց ասում եմ... ում պետք է»:

ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հունվարի 20-ին և 21-ին հանդիպումներ է անցկացնում ՆԳ և ԱԱ նախարար Սերժ Սարգսյանի և գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի հետ և հանձնարարում «մոբիլիզացնել ուժերը հանցագործությունները բացահայտելու և հնարավոր նոր ահաբեկչությունները կանխելու համար»:

Վազգեն Սարգսյանի ասուլիսը

Հունվարի 23-ի երեկոյան Պաշտպանության նախարարությունում շտապ մամուլի ասուլիս է հրավիրում Վազգեն Սարգսյանը.

> *«Քաղաքական իրավիճակը Հայաստանում լարվում է, հիմքում, բնականաբար, Արցախի հարցի կարգավորման խնդիրն է: Ես չէի անդրադառնա Արցախի խնդրի քաղաքական կարգավորմանը, քանի որ համարում եմ, որ դա առաջին հերթին երկրի բարձր քաղաքական ղեկավարության խնդիրն է: Սակայն, քանի որ խնդիրը քաղաքական դաշտից վերջին ժամանակներս փեղափոխվում է բարոյական, անձնական, սոցիալական դաշտեր, ես ստիպված և նաև պարտավորված եմ իմ կարծիքը հայտնել...]*
>
> *[...Ես եմ եղել, որ նախ՝ 1993-ին նախագահ Տեր-Պետրոսյանի ցուցումով գնացել եմ բանակցելու Սերժ Սարգսյանի հետ*

նրա Հայաստան գալու համար, և 1997-ին գնացել եմ Ստեփանակերտ՝ բանակցելու Ռոբերտ Քոչարյանի հետ, որպեսզի նա գա Երևան որպես վարչապետ: Երկու դեպքում էլ նրանք դեմ էին, Ղարաբաղի թիմը դեմ էր, մեկնաբանում էին, թե կտանեք կօգտագործեք, հետո էլ դուրս կթողնեք: Սակայն նրանք հաստուն գտնվեցին և եկան Հայաստան: Սերժ Սարգսյանը 1993-ին եկավ Հայաստան, երբ Վազգեն Մանուկյանից հետո Հայաստանում պաշտպանության նախարար չէր գտնվում: Եվ Սերժ Սարգսյանի ավանդը Ղարաբաղի և Հայաստանի պաշտպանության մեջ, Ներքին գործերի նախարարության աշխատանքների կազմակերպման մեջ անուրանալի է: Նա՛ դարձավ ՆԳ և ԱԱ նախարար, որովհետև, երբ այդ նախարարությունները միացվեցին, դարձյալ նախարարի պաշտոնն առաջարկվեց Սերժ Սարգսյանին, քանի որ ուրիշ մարդ չկար, և նա համաձայնեց: Նա իր գործը անմռունչ, պարտքի խոր գիտակցությամբ, պատվով է կատարել: Ռոբերտ Քոչարյանը եկավ Հայաստան, երբ Հայաստանի տնտեսությունը, բյուջեն, քաղաքական կյանքը գտնվում էին կաթվածահար վիճակում: Նա համաձայնեց Հայաստան գալ, երբ երեք ամսվա 95 տոկոսով ընտրված նախագահ էր, և իր դիրքը չափազանց կայուն, ամուր ու շահեկան էր: Նա եկավ միայն մի պատճառով, որովհետև իրեն բացատրվեց նախագահ Տեր-Պետրոսյանի և իմ կարծիքը, որ մեր պատերազմն արդեն դուրս է եկել հերոսության դաշտից և մտել տնտեսական, քաղաքական դաշտ, և տնտեսությունն է որոշելու այսուհետ մեր հաղթանակի, Ղարաբաղի ճակատագիրը: Դա այն պահն էր, երբ Պաշտպանության նախարարությունը նույնիսկ վառելիքի փող չէր սրանում, վճարված չէին նույնիսկ բժիշկների ու ուսուցիչների աշխատավարձերը, և բյուջեում փող չկար...]

[...Ղարաբաղյան համարով մեքենաներ, ղարաբաղյան փեռորիստներ... ազնիվ չէ, անբարոյականություն է: Ղարաբաղի փեռորից այսօր չպետք է վախենալ, Ղարաբաղը փեռորի կարիք չունի: Ղարաբաղից պետք է վախենալ այն օրը,

երբ 200-250 հազար մարդ անտուն, անօթևան, վիրավորված, զինված կլցվի Երևան, եթե գնանք արաստահակյանների կանխանշած ճանապարհով: Ես ուզում եմ դիմել ժողովրդի ինքնագիտակցությանը. արհեստական էր այս ամենը, ամենավատ բանը, որ կարելի է անել, դա փոխադարձ սիրո, վստահության կորուստն է: Չկա այդպիսի բան, սուտ է, կեղծիք է, մի հավատացեք: Դուք հասկանում եք, թե ինչ է լինելու, եթե մեր ժողովուրդը հավատա դրան, եթե մենք չպայքարենք այդ կեղծիքի դեմ: Ղարաբաղի ցանկացած քայլ, Ղարաբաղում ցանկացած զինված հայաստանցի փղամարդ համարվելու է զոհ: Կասկածի որդը մեզ ներսից ուտելու է, մեզ՝ ջհանդամը, պետությունն է ուտելու:

Երկրորդ վտանգը, որ ես տեսնում եմ, հետևյալն է: Ցավոք սրտի, ավելի ու ավելի շատ կազմակերպությունների, անհատների, գործիչների են փորձում ներքաշել այս վատ խաղի մեջ, առաջին հերթին՝ ՆԳ և ԱԱ նախարարությանը: Թե ով է ուզում արդեն 6 ամիս, մեկ տարի դառնալ Անվտանգության նախարար, ձեզ քաջ հայտնի է, թե ինչ ճանապարհով է ուզում՝ նույնպես հայտնի է, ինչու է ուզում, կարծում եմ՝ հայտնի է. 99-ին ընտրություններ են: Եվ առանց Ներքին գործերի միջամտության՝ այդ մարդիկ ուղղակի չեն կարող պատգամավոր դառնալ: Ճանապարհը դա է. սկզբից կազմալուծել, անվստահություն մտցնել ՆԳ համակարգում իր նախարարի նկատմամբ, հետո արդեն մեղադրել, որ ոչինչ չի անում իր տեղակալին խփելու համար: Իսկ ինչ կատարվեց, երբ Համբարձում Գալստյանին սպանեցին՝ իրենց լավագույն ընկերոջը, ինչո՞ւ չպահանջվեց հրաժարականը Ներքին գործերի նախարարի: Վարդգես Պետրոսյանին սպանեցին, ինչո՞ւ չհամարվեց, որ Հայաստանում սոցիալական պայթյունի իրավիճակ է ստեղծվել: Հարցեր են, որոնք պարզ պատասխաններ են ակնկալում...]

[...Առաջին անգամ մենք հանդես ենք գալիս հաղթողի դիրքում, և ուղղակի պետք է գտնել եզրերը, ազգային

միասնականությունը, վերականգնել այն ոճը, որ մենք ունեինք, և մեզ հատուկ վստահ, մարդավայել, սթափ կեցվածքով մտնել բանակցությունների դաշտ և մեր ռազմական հաղթանակները վերածել քաղաքական հաղթանակների: Այս ամենի համար պետք է հավատ, ազգային միասնականություն. եթե մենք Հայաստանի ներսում ունենանք միասնականություն, Սփյուռքը առավել քան պատրաստ է մտնելու այդ միասնության մեջ: Մենք պետք է կարողանանք մեծացնել մեր համաշխարհային դիմադրողականությունը տնտեսապես, քաղաքականապես, բարոյապես և անկասկած հաջողություններ կունենանք»...]

Լևոն Տեր-Պետրոսյանը հեռանում է

Վազգեն Սարգսյանի ասուլիսից երեք օր անց լրագրողների հետ շփվում է Վանո Սիրադեղյանը:

Նա շարունակում է գործուն քայլեր ձեռնարկելու կոչեր անել նախագահին.

«Իրավիճակից դուրս գալու ուղիները պետք է ձևակերպի նախագահը: Նախագահը սահմանադրական լիազորություններ, իրավունքներ ու լծակներ ունի և կարող է ժամանակի ընթացքում կամ էլ կարճ ժամկետում լուծում գտնել»:

Ակնհայտ է, որ Վանոն չի ցանկանում իր հանրային խոսքով էլ ավելի մեծ լարում հաղորդել արդեն իսկ լարված իրադրությանը.

«Եվ Հայաստանում, և Ղարաբաղում մեզանից ոչ մեկը չի մտածում և որևէ այլ բան չի ցանկանում, քան Ղարաբաղի փաստացի անկախության պահպանումը: Եվ եթե այս հարցում մենք միակարծիք ենք, մնացյալը ածանցյալ է: Մնացյալը քաղաքական բանավեճերի կրքերն են»:

Վանոն նաև ասում է, որ Շարժման տասնամյակն է, և «կրքերը

անպայման պետք է բորբոքվեին, դա բնական է»: «Մեկ-երկու ամսից սա էլ կանցնի, և բոլորը կտեսնեն, որ, կրկնեմ, բոլորը նույնն են ասում, բայց տարբեր ամբիոններից ու տարբեր հուզականությամբ»:

Բայց անցնում է մի քանի օր, և փետրվարի 3-ին Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական է տալիս: Իրենց պաշտոնները թողնում են Վանո Սիրադեղյանը, Բաբկեն Արարքցյանը, իսկ ՀՀՇ-ն կորցնում է մեծամասնությունը խորհրդարանում:

Մոտ երկու շաբաթ անց «Առավոտը» հարց է ուղղում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, թե արդյոք որևէ նմանություն տեսնում են Շարժման ծավալման օրերի հետ: Վանո Սիրադեղյանն ասում է.

«Ոչ մի նմանություն չկա: Այն ժամանակ Սովետական միության դեմ էինք Ղարաբաղի հարցով ըմբոստացել, իսկ հիմա այդպիսի ինչ հարց կա: Այժմ անգամ իշխանությունների այդքան կտրուկ փոփոխություն էլ չի եղել: Իսկ այդ օրերը մտաբերելիս առաջին հերթին հիշում եմ, որ բոլորս ջահել էինք ու ավելի... լավը»:

«Դյուրահավատ չեմ, հավատավոր եմ»

1997 թվականի վերջին ամիսներին Վրեժ Իսրայելյանին տված հարցազրույցում Վազգեն Սարգսյանը, պատասխանելով իր դյուրահավատության վերաբերյալ հարցին, ասում էր.

«Ես դյուրահավատ չեմ: Այդպես մտածողներից շատերը «մատ» եղան թե դրսում, թե ներսում: Դյուրահավատ չեմ, հավատավոր եմ: Չեմ սիրում ավելորդ կասկածամտությունը: Տեղի-անտեղի թշնամիներ փնտրել-գտնելու մոլուցք չունեմ»:

Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հաջորդ օրը, զրուցելով լրագրողների հետ, Վազգեն Սարգսյանը նշում է.

«Նախագահ Տեր-Պետրոսյանի հետ մեր հակասություններն այդքան

խոր չէին, և այդ խոսակցությունները ռազմական ուժի բնույթի մասին չէին, գաղափարական բնույթի էին: Նույն հաջողությամբ կարող էի ես այսօր չլինել ասպարեզում: Եթե Տեր-Պետրոսյանն ինձ աշխատանքից ազատեր, ես գնալու էի հանգիստ, խաղաղ, և ոչ ոք դրանում չի կասկածում: Նաև՝ ինքը. ես հրաժարական չեմ տա: Ինձ կարող են աշխատանքից ազատել: Եվ ես կգնամ»:

Նաև ասում է. «Մարսափելի ոչ մի բան չեմ տեսնում: Ինձ համար սա շատ տխուր է, բայց օրինաչափ»:

Վազգեն Սարգսյանն ասում է, որ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի մասին տեղեկացել է նրա հեռուստատեսային ելույթից 15 րոպե առաջ: Սակայն Սևրան Շահսուվարյանի պատմածը վկայում է, որ Վազգենը, թերևս, Տեր-Պետրոսյանի հրաժարականի օրը չի իմացել, բայց այդ իրադարձությանը սպասում էր.

«Լևոնի հրաժարականից մի քանի օր առաջ ինձ կանչեց, ես այդ ժամանակ հեռուստատեսությունում էի աշխատում: Վիսկին դրեց, մինչև ուշ գիշեր՝ մինչև 3-ը, խոսեցինք: Ասաց՝ քեզ հետ անկեղծ եմ խոսում, նախագահի հրաժարականն է սպասվում: Խնդրեց, որ հետևեմ հեռուստատեսության անցուդարձին: Ամեն օր զանգում էր, ասում էի՝ չէ, նախագահականից տեսախցիկ չեն ուզել: Հրաժարականի օրը զանգեցի, ասացի՝ Լևոնը տեսախցիկ ուզեց, ուղարկել եմ»:

Ռուզան Տոնոյանը հիշում է Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո Վազգենի այցը իրենց տուն.

«Ներս մտնելուն պես նախ ինձ հետ ողջագուրվեց, ապա այլայլված շրջվեց դեպի Վանոն, ձեռքերը պարզեց և ասաց. «Վանո, էս ինչ արեցիք, բայց ախր...»: Շարունակությունը ես չլսեցի, որովհետև Վանոն Վազգենին լուռ ուղեկցեց դեպի աշխատասենյակ»:

«Շատ կոպիտ սխալ էր չպնդելը»

Փետրվարի 4-ին լրագրողների հետ խոսում է նաև Վանո Սիրադեղյանը:

«Զարգացումները դրված են Սահմանադրության հիմքում: Սահմանադրությունը թույլ է տալիս, որ նախագահական իշխանությունը սահուն վերածվի վարչապետական իշխանության: Իմ խիղճը էդ իմաստով հանգիստ է, որովհետև երբ 1995 թվականին նախագիծը դրվում էր քննարկման, և հետո ԱԺ-ում օրենքներ էին ընդունում իշխանության մարմինների մասին, ես նախագահին ասացի, որ երկրում տեղի է ունենում սահմանադրական հեղաշրջում: Ես զգուշացրել եմ այդ մասին»:

Վանո Սիրադեղյանը կամ անկեղծորեն մոռացել էր, կամ չէր ցանկացել հիշել Սահմանադրության նախագծի մասին իր այն խոսքերը, որոնք 1995 թվականի հանրաքվեից օրեր առաջ տպագրվել էին «Հայք» թերթում.

«Սահմանադրության այս նախագիծը նույնիսկ շատ ժողովրդավարական է: Երբ խոսվում է բռնապետության մասին, ես ոչ մեկին չեմ մեղադրում, հասկանում եմ բոլորին. պետություն չունեցող ժողովուրդ ենք և չգիտենք՝ ինչ բան է պետությունը: Այդ պատճառով էլ պետության ատրիբուտները շփոթում ենք բռնապետության ատրիբուտների հետ: Պարզ պետության, պետականության հաստատման ընդգծված քայլեր ենք իրականացնում՝ ամենաժողովրդավարական պետությանը վայել քայլեր»:

Անդրադառնալով ԱԺ մեծամասնության փլուզմանը՝ Վանոն հիշում է, թե ինչպես իրենց իսկ ստեղծած «հրեշը» հոշոտեց իրենց՝ նշելով. «Իմ մտերիմ ընկերները գիտեն, որ ես ամեն ինչ արեցի, որ այդպիսի խորհրդարան չընտրվի: Համենայնդեպս՝ անպատկառ մեծամասնությամբ»:

Ամիսներ անց՝ 1998 թվականի հոկտեմբերին, պատասխանելով «Նոյյան Տապան»-ի այն հարցին, թե ինչ չի արել, որ պետք է աներ, Վանոն խոստովանում է.

«Այնքան բան չեմ արել: Ես պետք է պնդեի և աշխատեի համոզել ՀՀՇ-ին և Նախագահին, որ 1996 թվականի ընտրությունների երկրորդ փուլ լիներ, որովհետև երկրորդ փուլի ընտրություններ էին: Շատ կոպիտ սխալ էր չպնդելը»:

«Ընկերականությունը մնում է շատ կարևոր հանգամանք»

1998 թվականի ամռանը Վանո Սիրադեղյանն առաջին անգամ խոսում է իշխանափոխությունից հետո Վազգեն Սարգսյանի հետ իր հարաբերությունների մասին: «Իրավունք»-ի թղթակից Հովհաննես Գալաջյանի հետ հարցազրույցում նա մեկնաբանում է այն փաստը, որ Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո իրեն տեսել են Վազգեն Սարգսյանի համիարզ Մհսոյի (Մեսրոպ Գեղագուլյանի) հետ.

«Թեև մենք տարբեր քաղաքական հայացքներ, կարծիքներ ունենք իշխանափոխության մասին, Վազգենն իմ ընկերն է և մտածում է իմ անձնական անվտանգության մասին:

Ինչ վերաբերում է իմ հարաբերություններին Վազգենի հետ, ապա բոլոր քաղաքական ցնցումների ժամանակ, այնուամենայնիվ, ընկերականությունը մնում է շատ կարևոր հանգամանք: Դա կարևոր է ոչ միայն բարոյական առումով: Չի կարելի պետությունում նախադեպ թույլ տալ, որ վերաբերվես նախորդ իշխանության մեջ եղած ընկերոջը այն ձևով, որով քեզ կարող են վերաբերվել հետո: Դա պետական անվտանգության հարց է. եթե ամեն նոր իշխանություն վատ վերաբերվի հին իշխանությանը, ապա կստացվի պերմանենտ քաղաքական բարդակ: Ես այսօր կամ, վաղը չկամ, բայց կյանքը շարունակվում է, չէ»:

1998 թվականի հոկտեմբերի 6-ին Ազգային ժողովի ամբիոնից Վանոն

Վազգենի վերաբերյալ մի արտահայտություն է օգտագործում, որը չափազանց հաճախ են մեջբերում նրանց հարաբերությունները հիշատակելիս.

«Ընտրություններից հետո, վստահ եմ, որ այդպես է լինելու, նախագահի աշխատակազմի ղեկավարի ասած «սուպերնախարար» Վազգեն Սարգսյանից մենակ կամուֆլյաժը կմնա, քանի որ նա կզրկվի հենարանից Պառլամենտում, ինչը արդեն նկատվում է»:

«Վանոն միշտ է օրիգինալ մտքեր արտահայտում»

Աշնան վերջին Վանոն սկսում է քննադատել Լևոն Տեր-Պետրոսյանին: Նոյեմբերի սկզբին ասում է, որ միավորելով Ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարարությունները՝ նախագահը նպատակ ուներ իշխանության բերել Ղարաբաղի քաղաքական էլիտան: «Առավոտ»-ի թղթակից Արմեն Ջաքարյանի հետ հարցազրույցում մեկնաբանելով այդ խոսքերը՝ ՆԳ և ԱԱ նախարար Սերժ Սարգսյանն ասել էր.

«Վանոն միշտ է օրիգինալ մտքեր արտահայտում, թեպետ չգիտեմ, թե դրանցից որ մեկն է իրականություն դարձել: Երևի թե պետք է այդ հարցը Լևոն Տեր-Պետրոսյանին ուղղել, որովհետև ես չգիտեմ, թե ինչ մտքեր կան նրա ուղեղում: Եթե Վանոն նման փաստեր ունի, ճիշտ կլինի հրապարակել դրանք»:

Նոյեմբերի վերջին Վազգեն Սարգսյանը ելույթ է ունենում Հանրապետական կուսակցության խորհրդաժողովին և ասում, որ «բոլոր այն պետությունները, որոնք ուզում են իրենց ժողովուրդների համար այս արևի տակ կայուն և մնայուն տեղ ստեղծել, պետք է կարողանան լիբերալ և ազգային արժեքների դաշտում գտնել ոսկե միջինը»: 1998 թվականի նոյեմբերի 24-ին Նարինե Դիլբարյանը «Ազգ» թերթի առաջին էջի իր հոդվածում գրում էր.

«Խորհրդաժողովը ներկաներին մատուցեց ավելին, քան ակնկալվում

էր. «Երկրապահ-Հանրապետական» միաձուլմանը զուգընթաց՝ Հայաստանում ստեղծվում է մի նոր շարժում, որը պատրաստ է առաջնորդելու Վազգեն Սարգսյանը»:

Հոդվածագիրը մեջբերում է Վազգեն Սարգսյանի բառերն այն մասին, որ իր ստեղծվելիք շարժման շուրջ հավաքվելու են բնույթով և համոզմունքներով շատ տարբեր մարդիկ, ինչպես «ճանճերը՝ մեղրի շուրջը», բայց անձամբ իր համար շարժման կայացման նախապայմանը «իրենց շուրթերը անեծքով չպղծած» անհատների համախմբումն է:

«Ամենաշահածը դուրս եկավ Լևոն Տեր-Պետրոսյանը»

Տեր-Պետրոսյանի հասցեին քննադատության ամենամեծ չափաբաժինը Վանոն ինչեցնում է 1998 թվականի դեկտեմբերի վերջին օրերին «Մարդու ժամանակը» հաղորդմանը տված հարցազրույցում:

«Վազգեն Մանուկյանը և Լևոն Տեր-Պետրոսյանը ունեին մի թերություն (վերջինիս մոտ դա մի քանի տարի հետո արտահայտվեց)՝ կառավարողի ասիական տիպը: Այսինքն՝ ղեկավարել ոչ թե քաղաքական համակարգով, այլ պալատական ինտրիգների՝ հանել-դնելու միջոցով»,- նշում է Վանոն՝ ասածը հիմնավորելով սեփական օրինակով.

«ՆԳ նախարարի պաշտոնը թողնելիս Տեր-Պետրոսյանին ասացի՝ երկիրը մնում է միահեծան բանակի իշխանության տակ, շատ վտանգավոր քայլ ես անում: ՆԳՆ-ից իմ դուրս գալուց սկսվեց այն դիսբալանսը, որի հետևանքով 1998 թվականին Տեր-Պետրոսյանը գնաց: Շատ ավելի ուշ իմացա, որ նախագահը հրահանգել էր Սերժ Սարգսյանին, որ նա գնա և ջարդի Ներքին գործերի նախարարությունը: Ջարդվեց մի կառույց, վաղը կջարդվի բանակը՝ դա բացառված չէ, որովհետև ես պատերազմը չեմ բացառում: Դա պետության կործանման սկիզբն է»,- ասում է Վանո Սիրադեղյանը: Նա նաև ներկայացնում է «Երկրապահ»-ի՝ քաղաքական գործոն

դառնալու իր վարկածը.

«Նախկին նախագահը 97-ի սեպտեմբեր-հոկտեմբերի իր ելույթով և «Խաղաղություն, թե պատերազմ» հոդվածով, փաստորեն, ձեռքերը լվաց Ղարաբաղյան հարցից: Նա փակուղի մտավ՝ չկարողանալով համոզել Ղարաբաղի քաղաքական էլիտային: Ռոչարյանին բերելը նշանակում էր, որ Հայաստանի քաղաքական էլիտան այլևս չի կարող թելադրել: Ամրապնդվեց իշխանության ռազմական, զինվորական մասը: Բնականաբար, «Երկրապահը» կարևոր դեր ունեցավ, բայց «Երկրապահ»-ի քաղաքականացումը նրա նախաձեռնությունը չէր: 1994 թվականին, երբ հզոր էր ընդդիմադիր դաշինքը, Լևոնը խուճապի մեջ ընկավ և Վազգեն Սարգսյանին առաջարկեց քաղաքականացնել «Երկրապահը»»:

Վանոն նաև ասում է, որ իրեն հնարավորություն էր տրված այդ նոր իշխանության մեջ իր տեղն ունենալու, «բայց ես դավադրության համար պիտանի չեմ,- շեշտում է Նա,- նույնիսկ եթե այն երկրի ղեկավարն է կազմակերպում (իշխանափոխությունն իրականում գլխավորել էր ոչ թե Վազգեն Սարգսյանը, այլ Լևոն Տեր-Պետրոսյանը):

Այդքան բանից հետո ամենաշահածը դուրս եկավ Լևոն Տեր-Պետրոսյանը. նա հայոց պատմության մեջ մնաց որպես երկրի նզակի ղեկավար, որը հողեր է նվաճել և չի հանձնել»:

Բասկետբոլն ու «ընդհանուր պետությունը»

2012 թվականի մարտի 5-ին՝ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրը, Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը Mediamax.am կայքում հրապարակում է «Ինչպես ծնվեց «ընդհանուր պետության» գաղափարը» յունակը՝ նվիրելով այն Վազգենի հիշատակին:

«1998 թ. նախագահական ընտրություններից առաջ և հետո որոշ ժամանակ Ռոչարյանը հաճախ էր բասկետբոլի խաղեր

կազմակերպում: 1998 թ. մայիսի 14-ին հերթական անգամ հավաքվել էինք Երևանի Կարմիր խաչի հիվանդանոցի մարզասրահում՝ բասկետբոլ խաղալու: Նոր էինք սկսել խաղը, երբ արագ դահլիճ մտավ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը: Նա մեր բասկետբոլային խմբի մաս երբևէ չէր եղել. Վազգենը ֆուտբոլ էր սիրում խաղալ: Ակնհայտ էր, որ ինչ-որ մի անսպասելի բան էր կատարվել, և նա ցանկանում էր այդ մասին խոսել Քոչարյանի հետ: Քոչարյանն ընդհատեց խաղը և մոտեցավ դաշտի եզրին անհամբեր սպասող Վազգենին: Հազիվ երկու բառ էին փոխանակել, երբ նա ձեռքի շարժումով ինձ էլ կանչեց մասնակցելու զրույցին: «Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեևը զանգահարեց և ասաց, որ արտաքին գործոց նախարար Պրիմակովը Օսկանյանին և ինձ հրավիրում է Մոսկվա՝ խորհրդակցություններ անցկացնելու համար»,- ասաց Վազգենը: Մի պահ հապաղելուց հետո Քոչարյանը ասաց. «Խնդիր չեմ տեսնում, գնացեք-տեսեք՝ ինչ է ուզում»:

Մեր զրույցը խաղադաշտի եզրին շարունակվեց. հարցեր հնչեցին, թե ինչու այսքան հապճեպ, ինչու պաշտպանության նախարարների մասնակցությամբ, և արդյոք նման հրավեր ստացել է նաև ադրբեջանական կողմը: Այդ օրերին բանակցային գործընթաց չկար. միջնորդների կողմից վերջին առաջարկությունն արվել էր 1997 թ. աշնանը՝ նրանց ներկայացրած փուլային տարբերակը, որից հետո արդեն քաղաքական իրավիճակը Հայաստանում փոխվել էր: Մայիսի 15-ի երեկոյան Վազգենի հետ ուղևորվեցինք Մոսկվա: Մայիսի 16-ին՝ առավոտ շուտ, մեկնեցինք Մոսկվայի մոտակայքում գտնվող Պաշտպանության նախարարությանը պատկանող մի առանձնատուն: Երբ ներս մտանք, մեզ դիմավորեցին արտաքին գործոց նախարար Պրիմակովը, պաշտպանության նախարար Սերգեևը և Ռուսաստանի Դաշնության հետախուզության պետը:

Ելցինը Պրիմակովին արտաքին գործոց նախարար էր նշանակել 1996 թ. հունվարին: Նա փորձառու ու ծանրակշիռ պետական գործիչ էր, որը իսկայական գիտելիքներ ուներ նաև իր գիտական անցյալի բերումով: Այդ օրերին Պրիմակովի և Քոչարյանի հարաբերությունները բավական լարված էին: 1996 թ. նոյեմբերին, երբ Քոչարյանը ԼՂՀ նախագահն էր, Պրիմակովը այցելեց Ստեփանակերտ՝ միջնորդելու Բաքվի և Ստեփանակերտի միջև գերիների փոխանակման հարցում: Քոչարյանը մերժեց Պրիմակովի այդ նախաձեռնությունը: Դա լուրջ նսեմացք էր թողել Պրիմակովի մեջ: Իսկ 1998 թ. ՀՀ նախագահական ընտրությունների նախաշեմին Պրիմակովը ինչ-որ մի պահի նախապատվություն էր տվել Կարեն Դեմիրճյանի թեկնածությանը:

Փոխադարձ նեղվածության հարցը որոշ ժամանակ անց բաց քննարկման առարկա դարձավ իմ և Պրիմակովի մի քանի առանձնազրույցների ժամանակ: Պրիմակովի և իմ միջև շատ արագ բավական ջերմ հարաբերություններ հաստատվեցին, որոնց հիմքերը դրվեցին հենց այդ՝ Մոսկվայի մոտակայքում կայացած առաջին հանդիպման ժամանակ: Հանդիպումը տևեց ավելի քան երկու ժամ, և հիմնականում երկխոսություն էր իմ ու Պրիմակովի միջև:

Ողջույնի կարճ խոսքից հետո Պրիմակովը անմիջապես անցավ գործի բուն էությանը՝ ասելով, որ հանդիպման նպատակն այն է, որ Ռուսաստանի Դաշնությունը հայկական կողմին փոխանցի իր մոտեցումները ԼՂ հարցում առ այն, որ հակառակ Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխության՝ փուլային տարբերակը մնում է ուժի մեջ, և Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքների մեծ մասը պետք է վերադարձվի Ադրբեջանին: «Իսկ ուժային նախարարների ներկայությունը,- ասաց Պրիմակովը,- անհրաժեշտ է, որպեսզի հայկական կողմը գիտակցի, որ սա Ռուսաստանի ընդհանուր և միասնական դիրքորոշում է, և որ հայկական կողմը հանկարծ չկարծի, թե

ուժայինները կարող են այլ մոտեցումներ ունենալ, և փորձի խաղարկել այդ տարբերությունը»:

Մեզ համար դա, իհարկե, անակնկալ էր, և այդ պահին մենք մի փոքր շփոթված էինք: Վազգենը և ես իրար նայեցինք՝ յուրաքանչյուրս հույս ունենալով, որ մյուսը իր վրա կվերցնի Պրիմակովին պատասխանելու պատասխանատվությունը:

Մտքումս արդեն շատ հստակ էին ԼՂ հարցում մեր մոտեցումները և մեր կողմից իրականացվող քաղաքականության հիմնական դրույթները: Այդ պահին իմ առջև ծառացած հիմնական մարտահրավերն այն էր, որ ես կարողանայի համադրել դրանք մեր տարածաշրջանում Ռուսաստանի շահերի հետ: Ես գիտեի նաև Մոլդովայի և Մերձդնեստրի միջև ընթացող բանակցությունների բովանդակության և 1997 թ. մայիսի 7-ին սփորագրված հուշագրի մասին, որը կառուցված էր Պրիմակովի առաջարկած «ընդհանուր պետության» գաղափարի վրա: Իմ պատասխանի մեջ ես հիմնականում կանգ առա երեք կետի վրա.

Առաջին՝ *առանց Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի լուծման կամ առնվազն դրա հստակեցման ցանկացած՝ նույնիսկ մեկ տարածքի վերադարձը այնքան խոցելի կդարձնի Լեռնային Ղարաբաղը, և հետևաբար, կթուլացնի Ռուսաստանի դաշնակից Հայաստանի դիրքերը, որ բնականաբար կհանգեցնի Ռուսաստանի դիրքերի թուլացմանը Կովկասում:*

Երկրորդ՝ *թեև մերժելով փուլային լուծման տարբերակը՝ հայկական կողմը չի պնդում, որ միակողմանի լուծումներ լինեն, այլ գտնում է և պատրաստ է, որ բանակցությունների միջոցով կարելի է համադրել ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները:*

Երրորդ՝ *Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է կիրառել ոչ կոնվենցիոնալ մոտեցումներ: Ես ասացի, որ մեզ համար, օրինակ, ընդունելի կլիներ փաստացիորեն՝ de facto անկախ, իրավականորեն՝ de jure ոչ Ադրբեջանի կազմում կարգավիճակը, և այդ առումով արժի մտածել մերձդնեստրյան հակամարտության պարագայում առաջարկվող «ընդհանուր պետության» մեկ այլ տարբերակը կիրառելու մասին, որը Ղարաբաղի և Ադրբեջանի միջև հորիզոնական հարաբերություններ կապահովի:*

Այդ երկար հանդիպումից հետո մեր բոլորի տպավորությունն այն էր, որ ռուսական կողմի սկզբնական դիրքորոշման համեմատ ինչ-որ բան փոխվեց: Երկար սպասելու անհրաժեշտություն չեղավ, որ մեր այս ենթադրությունը հաստատվի. դրանից հետո Պրիմակովը մեկնեց Բաքու՝ Լեռնային Ղարաբաղի հարցով բանակցելու: 1998 թ. նոյեմբերին Մինսկի խմբի համանախագահները կողմերին ներկայացրին «ընդհանուր պետության» առաջարկը:

Հայաստանն ու Ղարաբաղը նոր էին պատրաստվում կարծիք հայտնել փաստաթղթի առնչությամբ, երբ Ադրբեջանն այնպես հապճեպ ու կտրուկ մերժեց այն, որ արդեն անիմաստ էր ինչ-որ բան ասել: Իհարկե, «ընդհանուր պետության» վերաբերյալ փաստաթուղթն ընդունելի չէր նաև հայկական կողմի համար՝ չնայած, որ դրանում փորձ էր արվում Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի միջև զուտ հորիզոնական կապեր հաստատել, դրա մի քանի դրույթներ Ղարաբաղին լուրջ կախվածության մեջ էին դնում Ադրբեջանից: Սակայն, մեծ հաշվով, դա ևս մեկ կարևորագույն քայլ էր՝ լիսաբոնյան ընկալումները և միջազգային հանրության կողմից տարածքային ամբողջականության գերակայության վերաբերյալ կարծրատիպը վերացնելու ճանապարհին»:

Հիշում է Արա Թադևոսյանը.

Երբ Վարդան Օսկանյանից ստացանք այս հուշերը, կարդացի դրանք ու ապշեցի. պարզվեց, որ ես այդ պատմության հետ որոշակի կապ ունեմ, քանի որ նկարագրված բասկետբոլային խաղի մասնակիցն եմ եղել:

1998 թ. նախընտրական արշավի ժամանակ Ռոբերտ Քոչարյանն ու իր թիմը մի հանդիպում անցկացրին ուսանողների հետ: Դրանից հետո իմ ընկեր Դավիթ Ալավերդյանի հետ որոշեցինք լրագրողների թիմ հավաքել ու Քոչարյանի թիմին խաղի հրավիրել:

Պայմանավորվեցինք նրա խոսնակ Հասմիկ Պետրոսյանի հետ, սակայն մինչև ընտրությունները խաղալ այդպես էլ չստացվեց:

«Նախագահական» թիմում խաղում էին ՀՀ նախագահը, Սերժ Սարգսյանը, Վարդան Օսկանյանը, Իշխան Զաքարյանը, ԱԳՆ մամուլի խոսնակ Արսեն Գասպարյանը, ԱԳՆ աշխատակից Վլադիմիր Կարապետյանը, ինչպես նաև Ռոբերտ Քոչարյանի ավագ որդին՝ Սեդրակը: Չեմ կարող չասել, որ թիմում կային 1-2 պրոֆեսիոնալ բասկետբոլիստներ, որոնցից մեկի հասակը գերազանցում էր 2 մետրը, և նրա ձեռքից գնդակ խլելը գրեթե անհնարին էր:

Հակառակորդ թիմում ամենից լավ խաղում էին Քոչարյանն ու Օսկանյանը: Եթե առաջինը տեխնիկայի պակասը լրացնում էր արագ և ճարպիկ անցումներով օղակի տակ, ապա Վարդան Օսկանյանը խաղում էր իսկական պրոֆեսիոնալի պես՝ վաստակում էր առավելագույն միավորներ՝ նվազագույն ջանքեր գործադրելով:

Խաղը պարտվեցինք: Հաշիվը հստակ չեմ հիշում, բայց մրցակիցը մեզնից առաջ անցավ մոտ 20-25 միավորով:

Բավական երկար չէինք կարող խաղի մեջ մտնել, իսկ երբ ընտելացանք, հաշվի տարբերությունն արդեն շատ մեծ էր, հավասարեցնելն իրական չէր: Բայց պայքարեցինք ուժերի ներածին չափով. ես նույնիսկ մեկ 3-միավորանոց նետում արեցի, որի համար շատ հպարտ էի:

Վարդան Օսկանյանը գրում է, որ Վազգեն Սարգսյանը եկավ այն ժամանակ, երբ դեռ խաղում էինք: Իրականում Վազգենը դահլիճ մտավ, երբ խաղն արդեն պաշտոնապես ավարտվել էր, սակայն «նախագահական» թիմի անդամները ցանկանում էին մի փոքր էլ միմյանց միջև խաղալ: Ռոբերտ Քոչարյանն ու Վարդան Օսկանյանը մի քանի րոպե գրուցեցին Վազգեն Սարգսյանի հետ, որից հետո նա գնաց:

ՄԱՍ VIII. ՎԱՆՈՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է (ՈՐՊԵՍԶԻ ՎԵՐԱԴԱՐՁՆԱ)

Մեղադրանքները

1999 թվականի հունվարի 26-ին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը դիմում է Ազգային ժողովին՝ պատգամավոր Վանո Սիրադեղյանին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությամբ: Վանոն մեղադրվում է 1992-1994 թթ. կատարված քաղաքական սպանությունների պատվիրատուն լինելու մեջ:

Համաձայն ներքին զորքերի նախկին հրամանատար Վահան Հարությունյանի ցուցմունքի՝ Վանո Սիրադեղյանն էր հրամայել սպանել Հայկական երկաթուղու ղեկավար Համբարձում Ղանդիլյանին, ՊԱԿԿ-ի նախկին ղեկավար Սարիուս Յուզբաշյանին, Երևանի նախկին քաղաքապետ Համբարձում Գալստյանին և այլ անձանց: Վահան Հարությունյանի վկայության համաձայն՝ Սիրադեղյանը նաև Գլխավոր դատախազության գլխավոր քննչական վարչության պետ Վլադիմիր Գրիգորյանի և դաշնակցական պատգամավոր Կիմ Բալայանի անհաջող մահափորձերի պատվիրատուն էր:

Ազգային ժողովը մերժում է միջնորդությունը: Նախագահի մամուլի քարտուղար Վահե Գաբրիելյանը ափսոսանք է հայտնում, որ «ծանրագույն հանցագործությունների հեղինակներին պատասխանատվության կանչելու անհրաժեշտության մասին հայտարարող կուսակցությունները փորձում են քաղաքականացնել զուտ քրեական գործընթացը»:

Աննա Իսրայելյանը հիշում է, որ երբ առաջին քվեարկությունից հետո հանդիպել էր Վանոյին Ազգային ժողովի ճաշարանում, նա ասել էր.

«– Ինչ որ ուրախ չես, որ ինձ հետ ոչ մի վատ բան չեղավ:

Ես էլ ասացի.

- Ո՞նց ասեմ, որ չնեղանաս:

Ասաց.

- Ասա՛, ասա՛:

Ասացի.

- Դե, շուտ նստես, շուտ դուրս կգաս:

Ասաց.

- Ես կնստեի, բայց վախում եմ՝ Խչոյիս կարոտեմ:

Հետո առաջարկեց ինձ մեքենայով խմբագրություն տանել, և երբ Աժ տարածքից դուրս եկանք, ոստիկանները պատվի առան. մի մարդու, ում կալանավորման հարցն էր քիչ առաջ քննարկվում:

Ասաց.

- Չգրես հանկարծ. Հայկը (ներքին գործերի նախարար Հայկ Հարությունյանը) չբռնի՝ դրանց գործից հանի»:

Քվեարկությունից մի քանի օր անց Վանո Սիրադեղյանը լքում է Հայաստանը: Վկայություններ կան այն մասին, որ այդ հարցում նրան օգնել էր Վազգեն Սարգսյանն իր համիարզ Մոսոյի միջոցով:

Հաշտեցման կոչ

Հունվարի վերջին կայանում է Հանրապետական կուսակցության արտահերթ նիստը: Իր ելույթում Վազգեն Սարգսյանը Հայաստանի քաղաքական ուժերին հաշտեցման կոչ է անում և առաջարկում

միավորվել ոչ թե անձերի, այլ գաղափարների ու ծրագրերի շուրջ: Նա ասում է, որ ինչպես Տևր-Պետրոսյանի, այնպես էլ Քոչարյանի կառավարման ժամանակ չի խառնվել և չի խառնվում կադրային և տնտեսական հարցերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրեն դիմում են: Միաժամանակ նկատում է, որ պատերազմող պետության պաշտպանության նախարար լինելով՝ ինչքր չի կարող քաղաքական գործընթացներում ներգրավված չլինել: «Եթե պաշտպանության նախարարը քաղաքականության մեջ չլիներ, այնտեղ կարող էր նկրխուժել ամբողջ բանակը»,- բացատրում է նա:

Վազգեն Սարգսյանը նաև ասում է, որ ցանկանում է պաշտպանության նախարար մնալ, քանի որ առաջիկա 2-3 տարվա համար բանակաշինության հետ կապված աշխատանքի ահռելի ծավալ կա, որ ինքը ցանկանում է ավարտին հասցնել: «Բայց եթե վաղը նախագահր որոշում կայացնի, որ ես պետք եմ այլ ոլորտին, ես՝ որպես զինվոր, կենթարկվեմ հրամանին և պատրաստ կլինեմ պարտքս կատարել»,- նշում է Վազգենը:

ՀՀԿ համագումարի իր ելույթում Վազգեն Սարգսյանն անդրադառնում է նաև Վանո Սիրադեղյանի շուրջ ծավալվող իրադարձություններին: Նա ասում է, որ ճիշտ է համարում Վանոյին քրեական պատասխանատվության ենթարկելը, բայց առանց կալանավորման: Նա նաև հերքում է պնդումներն այն մասին, որ միջնորդությունը Ազգային ժողով ներկայացնելով՝ գլխավոր դատախազը կատարում էր իշխանությունների քաղաքական պատվերը:

Փետրվարին Ադվան Հովսեփյանը նորից է դիմում Ազգային ժողով և այս անգամ, երկրից Վանոյի բացակայության պայմաններում, նրա գործընկերները տալիս են իրենց համաձայնությունը: Նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվում:

Մարտի 10-ին Վանոյին ընտրում են ՀՀՇ վարչության նախագահ և ամսվա վերջին հայտարարում, որ հենց նա է գլխավորելու կուսակցության ցուցակր մայիսին 30 ին կայանալիք ԱԺ

ընտրություններում:

ՀՀԾ համագումարի կուլիսներում Լևոն Տեր-Պետրոսյանն իր հրաժարականից հետո առաջին անգամ կարճատև շփում է ունենում լրագրողների հետ: Երբ նրան խնդրում են մեկնաբանել ՀՀԿ համագումարում Վազգեն Սարգսյանի խոսքն այն մասին, որ Լևոնը, Ռոբերտը, Սերժը, Վանոն, Բաբիկը իր ընկերներն են, նախկին նախագահն ասում է.

«Գաղտնիք կա՞, որ բոլորն իմ ընկերներն են եղել՝ և Ռոբերտ Քոչարյանը, և Սերժ Սարգսյանը, և Վազգեն Սարգսյանը, և Վազգեն Մանուկյանը, և Աշոտ Մանուչարյանը, և Համբարձում Գալստյանը, և Վանո Սիրադեղյանը՝ բոլորն էլ իմ ընկերներն են եղել: Այդտեղ ինչ գաղտնիք կա»: Միաժամանակ ասում է, որ Վազգեն Սարգսյանի հետ չի հանդիպում:

Այնուհետև այսպիսի երկխոսություն է տեղի ունենում.

- Իսկ ինչ կասեիք գլխավոր դատախազի միջնորդությունների մասին:

- Դա Վանոյի դեմ չէր: Դա մեր երկրի վարկի դեմ էր: Չի կարելի այդպիսի գործ հարուցել:

- Այսինքն՝ Դուք կարծում եք, որ Վանո Սիրադեղյանը լիովին անմեղ է:

- Ես ուրիշ բան եմ ասել: Այն հիմնավորումը, որ դատախազը ներկայացրել է՝ խեղկատակություն է: Եթե բերեր լուրջ հիմնավորում, ոչ ոք ոչինչ չէր կարող ասել:

- Այսինքն՝ չե՞ք բացառում, որ ի վերջո պարզվի, որ Վանո Սիրադեղյանը, այնուամենայնիվ, հանցանք գործել է:

– Չեմ բացառում այն հնարավորությունը, որ Դուք էլ ինչ-որ հանցանք գործել եք:

«Ամենասկզբից սխալ է մեկնաբանվել»

Մեկնաբանելով Վանոյի ընտրությունը ՀՀԾ վարչության նախագահի պաշտոնում՝ Վազգեն Սարգսյանն ասում է, որ «դա կուսակցության ներքին գործն է», և ավելացնում, որ «ցավոք սրտի, ՀՀԾ-ն այժմ լուրջ քաղաքական մրցակից չէ»:

Այդ նույն հարցազրույցի ժամանակ Վազգեն Սարգսյանը մեկնաբանում է նաև ասեկոսեները, որոնց համաձայն պաշտպանության փոխնախարար Վահրամ Խորխոռունու (1998 թվականի դեկտեմբեր) և ՆԳ և ԱԱ փոխնախարար Արծրուն Մարգարյանի (1999 թվականի փետրվար) սպանությունների պատճառով Զինված ուժերի հրամանատարական կազմը տարաձայնություններ ունի ՆԳ և ԱԱ նախարար Սերժ Սարգսյանի հետ.

«Ամենասկզբից սխալ է մեկնաբանվել: Սերժ Սարգսյանը հրամկազմի անդամներից մեկն է, պաշտպանության նախկին նախարար, և հրամկազմի ու Սերժ Սարգսյանի միջև հակասություններ՝ որպես այդպիսին, չկան: Մեզ մտահոգել է Մարգարյանի ու Խորխոռունու սպանությունների փաստը, և մենք հանդիպել, զրուցել ենք, թե ինչպես կարող ենք մեկմեկու օգտակար լինել: Եվ ապագայում էլ շատ հավանական են այդպիսի հանդիպումները: Կարծում եմ՝ Սերժ Սարգսյանն ինքն էլ է նախաձեռնել նման հանդիպում, և նախորդը նրա նախաձեռնությամբ էր: Մամուլն ուղղակի սխալ ներկայացրեց»: «Դու որ գրած չլիներ, կսատկացնեի»

Թերևս տեղին է այստեղ հիշատակել Վազգենի բարդ հարաբերությունները մամուլի հետ:

Հովիկ Չարխչյանը հիշում է.

«Քանի անգամ ուղղակի հավաքել է լրագրողներին միայն մի բան ասելու համար՝ խնդրում եմ, 6 ամիս բանակի մասին բան մի գրեք, թողեք մի քիչ գործ անենք, խանգարում եք մեզ: Կային լրագրողներ, որոնց ընդհանրապես տանել չէր կարողանում»:

Ըստ Արմեն Դավթյանի՝ լրագրողների հանդեպ Վազգեն Սարգսյանի այս վերաբերմունքն այլ բացատրություն ուներ.

«Ինքն իր համար չէր անհանգստանում. ուզում է՝ քննադատեն, ուզում է՝ վարկաբեկեն: Ինքն էնքան մեծ էր, ուժեղ էր, որ իր համար դա նշանակություն չուներ: Բայց բանակի հետ կապված ուրիշ վերաբերմունք ուներ: Ասում էր՝ սրանք ուզում են դրսում մեկին դուր գալ: Այսինքն՝ կարծում էր, որ դա արվում է միտումնավոր՝ բանակը վարկաբեկելու համար: Ինքը չէր հավատում քննադատողի անկեղծությանը: Ասում էր՝ խնդիրներ կան, եկեք ինձ ասեք, ինչի՞ եք էնպես անում, որ թուրքերի ականջն ընկնի: Բանակ ենք սարքում, հեղինակությունը, անունը պիտի պահենք. եթե դուք ասում եք, որ զինվորը սոված է, ես ոնց զորահավաք անեմ, սկսում են փախչել բանակից: Ինքը վստահ էր, որ բանակը հասարակությունն էր. եթե հասարակությունը կիսասոված է, ուրեմն՝ բանակն էլ է կիսասոված: Ինքն ասում էր՝ հասարակությունն ավելի լավը դարձնենք, մեխանիկորեն բանակն էլ ավելի լավը կդառնա, ինչի՞ եք բանակից կառչել: Դրա համար, որ բանակին քննադատում էին, իր «ֆազը գցում» էր»:

Իսկ Արամ Աբրահամյանը վկայում է, որ Վազգենի արձագանքը նույնքան նյարդային էր լինում նաև քաղաքական բնույթ ունեցող քննադատության դեպքում.

«Ես քննադատում էի Վազգենին՝ ՀՀԿ-ն գլխավորելու և երկրապահների չափազանց ամբարտավան պահվածքի համար: Երկու անգամ զանգահարել էր ինձ. ասում էր, որ ես իրեն չեմ

հասկանում, որ մտավորականները պետք է բանակի կողքին լինեն: Մի անգամ էլ կառավարական ամառանոց կանչեց՝ կրկին կշտամբում էր»:

Վազգենը խիստ էր անգամ «Գարուն»-ի իր գինակից Կարինե Խոդիկյանի նկատմամբ:

«Քննադատական հոդված էի գրել, և մինչ օրս հիշում եմ իր զանգը: Վերցրի հեռախոսը, ասաց. «Ինչ որ գրած չլինեիր, կսատկացնեի», ու լսափողը ցած դրեց»:

«Միասնություն» դաշինքի ծնունդը

Մնրուժան Տեր-Գուլանյանը պնդում է, որ ինքն է ծանոթացրել Վազգեն Սարգսյանին և Կարեն Դեմիրճյանին:

««ԱՄՊ» հեռուստաընկերության «ԱՄՊ-ի ասպետ» մրցանակարաշխության ժամանակ երկուսն էլ մրցանակակիր էին, ես իրենց հրավիրել, իրար կողք էի նստեցրել, ծանոթացրի իրենց: Մինչ այդ անձնապես ծանոթ չէին»,- ասում է «Գարուն»-ի նախկին խմբագիրը:

Արամ Սարգսյանը պնդում է, որ «և Վանոն, և Վազգենը ժողովրդավարության կողմնակիցներ էին՝ ով էլ ինչ ասի»:

«Եթե Վազգենը ժողովրդավարության կողմնակից չլիներ, 1999 թվականին երկու շարաթ չէր համոզի Կարեն Դեմիրճյանին դաշինք կազմել, որը պիտի հաղթեր արդար ընտրություններում: Կարող էր ուժային մեթոդներով միայն ՀՀԿ-ով մտնել ու «խզարել»»,- նկատում է Վազգեն Սարգսյանի եղբայրը:

Նա 1999 թվականի նախընտրական արշավի հետ կապված մի հետաքրքիր դիպված է հիշում:

«ՀՀՇ տեսահոլովակում միայն Հայաստանի քարտեզն էր ցուցադրվում

առանց Լեռնային Ղարաբաղի: Դա Վազգենին զայրացնում էր: Ասում էր. «Այո, ընտրությունները Հայաստանում են, Ղարաբաղը չի մասնակցում, բայց չի կարելի նման բան անել»»:

Մայիսի սկզբին Վանո Սիրադեղյանը Սոֆիայից վերադառնում է Երևան, ձերբակալվում է օդանավակայանում, բայց ազատ է արձակվում 96 ժամ անց:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով դիմումների ներկայացման վերջին օրը՝ մարտի 30-ին, ՀՀԿ ներկայացուցիչ Ցուրի Բախշյանը պաշտոնապես տեղեկացնում է, որ ՀՀԿ-ի և ՀԺԿ-ի միավորումն իրականություն է: «Միասնությունը» միանգամից դառնում է ընտրական մրցավազքի գլխավոր ֆավորիտը: Դաշինքի ցուցակը գլխավորում են Կարեն Դեմիրճյանը և Վազգեն Սարգսյանը:

Վազգեն Սարգսյանը նշում է, որ «երկու կուսակցություններն էլ լուրջ ձևավորման փուլում են և կայացման ընթացքում ընդգծված և որոշիչ է լինելու երկու անհատ-առաջնորդների դերը: Կարեն Դեմիրճյանը և ես հեշտությամբ չենք հանգել դաշինքի ձևավորման գաղափարին: Հայաստանը մեկ գաղափարի երկիր է: Մենք տարբեր մարդիկ ենք, մեր աշխարհընկալումները մասամբ տարբեր են, բայց մեզ միավորում է ընդհանուր ցավը: Այո, մենք հակառակ բարիկադներում էինք, բայց թշնամական բարիկադներ չէին դրանք, մեզ առաջնորդում էր նույն ցավը, ինչ այսօր: Մեր մեջ կար առողջ մրցակցություն, ինչը մաղթում եմ բոլորիս: Այս դաշինքը կայացել է և կայանալու է. դրդապատճառներն առողջ են, նպատակը՝ հստակ և միասնական»,- ամփոփել էր Վազգեն Սարգսյանը 1999 թ. մայիսի 18-ին «Հայաստանի Հանրապետության» թերթին տված հարցազրույցում:

Մայիսի 30-ին տեղի են ունենում Ազգային ժողովի ընտրությունները: Մեծամասնական ընտրակարգով պատկերն այսպիսին է լինում.

«Միասնություն» դաշինք՝ 41,69% (29 պատգամավոր), Հայաստանի

Կոմունիստական կուսակցություն 12,09% (8), «Իրավունք և միասնություն» դաշինք 7,96% (6), ՀՅԴ 7,86% (5), «Օրինաց երկիր» կուսակցություն 5,28% (4), Ազգային ժողովրդավարական միություն 5,17% (4):

ՀՀՇ-ն, ինչպես և կանխատեսում էր Վանո Սիրադեղյանը, խորհրդարան չանցավ, բայց կուսակցության ղեկավարը պատգամավոր ընտրվեց մեծամասնական կարգով իր հայրենի տարածաշրջանում:

1999 թ. հունիսի 10-ին բացվեց ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանը: Ա.Ժ նախագահի ընտրվեց Կարեն Դեմիրճյանը: Հայաստանի վարչապետի պաշտոնը վերադարձրեց Վազգեն Սարգսյանը:

Դատավարությունը սկսվում է

Հուլիսի սկզբին Գլխավոր դատախազությունը հայտնեց, որ Վանո Սիրադեղյանի գործով նախաքննությունն ավարտված է, և նրա հինգ փաստաբաններ սկսել են ծանոթանալ գործի 39 հատորին:

Սեպտեմբերի 9-ին Երևանում մեկնարկում է Վանո Սիրադեղյանի դատավարությունը:

7 ամիս անց՝ 2000 թվականի ապրիլի սկզբին, Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանը որոշեց փոխել Վանո Սիրադեղյանի խափանման միջոցը և կալանավորել նրան: Այդպիսով դատարանը բավարարեց տուժող Մայիս Ոսկանյանի միջնորդությունը, որին միացել էր մեղադրող կողմը: Դատարանի որոշումն ուղարկվեց գլխավոր դատախազ Բորիս Նազարյանին, որն էլ դիմեց Ազգային ժողով՝ Վանո Սիրադեղյանին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությամբ, որն անմիջապես բավարարվեց: Այդ պահին, սակայն, Վանոն արդեն Հայաստանում չէր:

Երկու շաբաթ անց Ազգային հեռուստատեսությանը տված հարցազրույցում Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը մեկնաբանել էր Վանոյի անհետացումը.

«Համոզված եմ, որ Վանո Սիրադեղյանին օգնել են փախչել, այլապես նա չէր կարողանա դա անել: Իհարկե, շատ ավելի ճիշտ կլիներ, եթե իրավապահներն ավելի վաղ կալանավորեին Սիրադեղյանին: Բայց վստահություն չկար, որ այդ հարցը ԱԺ-ում անհրաժեշտ թվով ձայներ կստանա, և պատկերացրեք մի իրավիճակ, երբ կալանավորումից հետո դատախազը դիմում է ԱԺ և թույլտվություն չի ստանում, որից հետո Վանո Սիրադեղյանն ազատ է արձակվում»: Ռոբերտ Քոչարյանը նաև այն կարծիքն էր հայտնել, որ Սիրադեղյանին օգնել են հեռանալ մարդիկ, որոնք «այսօր որոշակի իշխանություն ունեն», և ավելացրել էր, որ «ոչ բոլորն էին հետաքրքրված Վանո Սիրադեղյանի կալանավորմամբ, և անկասկած, մեծ դիմադրություն կար»:

ՄԱՍ IX. «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»-Ը

«Դու մի՛ ասա. քո ասածը լինում է»

1998 թվականի սեպտեմբերի սկզբին «Առավոտ»-ի թղթակից Աննա Իսրայելյանին տված հարցազրույցում Վանո Սիրադեղյանն ասել էր.

«Մի ժամանակ, երբ ինչ-որ բան էի կանխատեսում, Վազգեն Սարգսյանն ասում էր. «Դու մի՛ ասա. քո ասածը լինում է»: Հիմա ես չեմ ասում»:

1999 թվականի հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունից հետո, Վազգեն Սարգսյանի չհրկիզվող պահարանում գտնում են Վանո Սիրադեղյանի նամակը, որը գրվել էր կանխատեսումներ չանելու մասին խոսքերից երկու ամիս անց՝ 1998 թվականի նոյեմբերին:

«Վազգեն, վրա հասավ այն պահը, որի մասին գրել եմ գարնանը... Հիշեցնում եմ՝ քաջ իմանալով, որ այդ բանը փիաճություն է պատճառում: Բայց հիշեցնում եմ, որ զարգացման իմ պատկերացումը այս անգամ լուրջ ընդունես.

Դու երկու ամիս էլ չունես: Քաղաքական այս պոտենցիալով, կազմակերպական խախուտությամբ (չորս ամիսն էլ չի պնդացնի), պլուս Հեմիրճյանը և գուցե 1-2 փոքրիկ բան՝ պառլամենտական ընտրությունները չես կրում: Համենայնդեպս, այնպես չես կրում, որ քեզ հետ լուրջ հաշվի նստեն:

Ռորերտը (կամ չգիտեմ՝ ով-ովքեր) գտել է Վազգեն Սարգսյանին չեզոքացնելու միակ տարբերակը. ես վստահ եմ՝ այդ պլանը եղել է գարնանից: Նրա կողքը նայիր՝ Վահան Հովհաննիսյան, Արամ Սարգսյան, Ալիկ Հարությունյան, Դավիթ Վարդանյան. բոլորը Մանուկյանի վաղեմի ընկերներն ու դաշնակիցներն են: Ամիսներ շարունակ Հայաստանի հասարակական-

քաղաքական մթնոլորտում ներշնչում են, որ քո գոյությունը «կասեցնում է Հայաստանի զարգացումը»: Ուշադրություն դարձրու ձևակերպման չարագուշակ անմեղությանը...

Պարզունակ կլինի, եթե այս ամենը բացատրեմ գործընկերներիդ նենգությամբ:

Նրանք փակուղի են մտել: Ո՛չ դուրս կարող են գնալ, ո՛չ ետ գնալ: Նրանք դատապարտված են Հայաստանում ունենալ բացարձակ իշխանություն, որի համար հարկ կլինի մանրացնել, փոշիացնել, ապա և ամայացնել Հայաստանի քաղաքական դաշտը, ինչպես արեցին Ղարաբաղում: Այս ծանապարհին պիտի դաշնակիցներ փոփոխեն, շարքից հանեն նշանակալի որևէ մեկին...

Ղարաբաղը ամայացնելիս դաշնակից (Ռոչարյանը) ուներ Հայաստանը, Հայաստանի դեպքում կգտնեն այլ երկիր: Հայաստանն էլ այլ երկիր է: Անձանց շարքից հանելուն դաշնակից գտան քեզ, քեզ արանքից կհանեն. Վազգեն Մանուկյանի միջոցով, Մանուկյանի ժամանակ կմտածեն... Վազգենը ոչ մեկից խելացի չէ:

Հայաստանը նրանց ափում է: Այդ ափելության համար (քոչարյանենք) վրեժխնդիր են լինելու երևելի անհատներից: Այնպես որ, միայն քեզանով գործը չի ավարտվելու: Մի մասին շարքից հանում են, որ իրենց դիմադրում են, մյուս մասին կհանեն, որ դեռ կան, երրորդներին՝ որ կարող են լինել: Դու ուշադիր լսիր կռված ընկերներիդ, նրանք քիչ են մնացել, բայց լավ գիտես դրանց հայափյաց բնույթը:

Հայը հային այդպես չի ափի – կմտածես դու: Իսկ ես կասեմ, որ՝ այո, նրանք հայ են: Ուրեմն մենք հայ չենք: Որովհետև հայը հային այդպես ափել չի կարող:

Առաջարկս.

Ընտրություններից առաջ, օրենքը երկրորդ ընթերցմամբ ընդունելուց առաջ, փոխիր Ազգային ժողովի նախագահին:

Քեզ կարող են մի ամսվա ընթացքում փասփի առաջ կանգնեցնել՝ Պառլամենտը ցրելով: Տրամաբանական առիթ կգտնեն: Ասենք՝ Պառլամենտը չի քվեարկի ինձ պատասխանատվության ենթարկելու առաջարկին, և քո ըմբոստության փորձը կմատուցեն որպես հանցագործներին պաշտպանելու փորձ: Այստեղ կրվում ես: Մինչ կմտածես՝ ինչ անել, Վ. Մանուկյանին կնշանակեն վարչապետի պաշտոնակատար և հեռուստատեսությունն ու մամուլը կդնեն ԱԺՄ-ի, Դաշնակցության, մյուսների փրամադրության փակ: Եվ այդ հիստերիային հաջորդող ընտրական կամպանիան փանուլ է փրված քո և Դեմիրճյանի համար:

Վազգեն Մանուկյանի դեմն առնելը կարող է քեզ բավարար թվալ: Բայց ուշադիր եղիր այն հանգամանքին, որ Մանուկյանի հարցը այս անգամ գուցե կեղծ է, իրականում կանցկացնեն 6 ամսից, իսկ դու հիմա քեզ հաղթած զգալու՝զգոնությունդ կկորցնես և կհամաձայնես այլ՝ մուխանաթ ժամանակավոր փարբերակի: Այնինչ առավել մուխանաթը գուցե Դարբինյանի մնալն է նախընտրական շրջանում, ինչը պնդողը ակամա դու ես լինելու:

Մի մտածիր, որ Ղարաբաղի անորոշ վիճակը քեզ վրա է մնալու: Մեկ է, քեզ վրա է մնալու: Կամ քեզ վրա են գցելու: Եթե չես ուզում մնա քեզ վրա, Լևոնի նման պիփի վճռական հեռանաս: Եթե պատասխանատվությունն արդեն վերցրել ես, պիփի մի քանի քայլ անես և ցիկլ փակես:

Հայտ ներկայացնելով վփանգի փակ ես դրել քո գինակից-ներին և շրջապատը, քո կործանումը բոլորի կործանումն է,

Հայաստանին տարիներ սպասող փեռորով…

Ջանգի՛ր խոսենք:

Քանի՞ մարդ է մնացել քեզ պաշտպանող:

ՓՏ. Եղած խաղի կանոններով յոթ ամիս դու կրվում ես: Փոխիր խաղի կանոնները: Այսօր դեռ քո ըմբոստությունը չի դիտվում երկրորդ, կդիտվի որպես առաջին՝ ընդվզման եզրափակիչ քայլ:

Արա՛, քանի դեռ Դեմիրճյանի գլուխը չեն կերել»:

1999 թվականի դեկտեմբերի 11-ին կայացած հարցաքննության ժամանակ Վանո Սիրադեղյանը վկայում է, որ նամակն առձեռն հանձնել է Վազգենին Պաշտպանության նախարարությունում հանդիպումներից մեկի ժամանակ: Պատասխանելով քննիչի հարցին, թե ինչո՞ւ է նամակ գրել, արդյոք Վազգեն Սարգսյանի հետ հանդիպելու և մտքերը նրա հետ կիսելու հնարավորություն չի՞ ունեցել, Վանոն ասում է.

«Հանդիպելու հնարավորություն ունեցել եմ, նամակում նշված մտքերս բանավոր, այլ մտքերի շարքում հայտնել եմ, բայց իմանալով հանդերձ, որ նա, լինելով գրող, գրավոր խոսքն առավել հիմնավոր է ընկալում, գրել եմ նամակի տեսքով»:

Քանի որ նամակի առաջին տողում Վանոն հիշատակել էր, որ Վազգենին ինչ-որ բան էր գրել նաև գարնանը, քննիչն առաջարկում է մանրամասներ հաղորդել.

«Այո՛, 1998 թվականի գարնանը Վազգեն Սարգսյանին նամակ հանձնել եմ, որի հիմնական բովանդակությունն այն էր, որ եթե ինքը չառաջադրվի նախագահի թեկնածու, իր քաղաքական ճակատագիրը վատ կվերջանա: Մի խոսքով՝ այդ նամակով հորդորել

եմ ոչ թե պաշտպանել Քոչարյանի թեկնածությունը, այլ առաջադրել իր թեկնածությունը»:

Քննիչը հարցնում է՝ գրված նամակը ինչպիսի ուսումնասիրությունների, դիտարկումների արդյունք է:

«Գրված նամակի բովանդակությունը՝ որպես քաղաքական գործիչ, հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների կամ անձնական դիտարկումների և գուցե քաղաքական ինտուիցիայի արդյունք է»:

Վանոն ասում է, որ իր նամակին Վազգենը ոչ գրավոր, ոչ էլ բանավոր պատասխան չի տվել: «Եվ ինքս էլ հետամուտ չեմ եղել պատասխան ստանալ՝ համոզված լինելով, որ կարդացել է, և հետևություններ ինքը կանի: Թե ինչ հետևություն է արել, ինձ հայտնի չէ: Մի խոսքով՝ պատասխան չի տվել»:

Պատասխանելով Վազգենի հետ վերջին հանդիպման մասին հարցին՝ Վանոն ասում է.

«Վերջին անգամ հանդիպել եմ պատգամավոր Վահան Զատիկյանի թաղման ժամանակ (1999 թվականի հոկտեմբերի 8-ին), որի ընթացքում որևէ հարցի շուրջ չենք խոսել, ընդամենը բարևել ենք և վերջ: Իսկ որոշակի ժամանակով զրույց ունեցել եմ ընտրություններից 3-4 շաբաթ առաջ՝ 1999-ի մայիսի սկզբներին: Խոսակցության թեման ընտրություններն են եղել. մանրամասները չեմ հիշում»:

«Ես պատրաստ չեմ»

Ռոբերտ Քոչարյանն իր «Կյանքն ու պայքարը» գրքում գրում է. «Նախագահին դրդելով հրաժարական տալ՝ մենք որևէ պատկերացում չունեինք, թե ով է լինելու թեկնածուն առաջիկա նախագահական ընտրություններում:

- Վազգեն, տարբերակ չունենք, ստիպված պետք է դու լինես,- ասացի ես:

Վազգենը շատ էմոցիոնալ արձագանքեց, գրեթե հիստերիայով.

- Չէ, ես չեմ կարող: Ես պատրաստ չեմ, ես չեմ գնա:

Նա շատ ծանր էր տանում խզումը Տեր-Պետրոսյանի հետ և չէր կարող պատկերացնել, որ կզբաղեցնի նրա տեղը: Համոզելն իմաստ չուներ»:

Մերուժան Տեր-Գուլանյանը պատմում է, որ Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո «կռված տղերքը գալիս ու խնդրում էին, որ համոզեմ Վազգենին՝ ինքը դառնա նախագահ»:

«Այդ թեմայով Վազգենի հետ մի օր շատ լուրջ զրույց ունեցա: Ասաց՝ չէ, շեֆ, ես փորձ չունեմ, երկիրը մեղք է. ես պիտի երկիրը ղեկավարելու փորձ ձեռք բերեմ: Ռոբերտն այդ փորձն ունի, ինքը կարող է: Հետո՝ Ղարաբաղ-Հայաստան միանալու խնդիր կա. ճիշտ կլինի, որ նախագահը Ղարաբաղից լինի»:

Նամակներն ու ներողամտությունը

1998-1999 թվականներին Վանոյի և Վազգենի շփումների և հարաբերությունների մասին տեղեկությունները հակասական են: Շփումներ եղել են, սակայն պարբերական բնույթ չեն կրել:

Արամ Սարգսյանը վստահեցնում է, որ 1998 թվականից հետո Վանոյի և Վազգենի հանդիպելու, խոսելու խնդիր երբեք չի եղել. «Գիշերվա ուշ ժամին եթե Վանոն ասեր, որ պետք է Վազգենին տեսնի, դա անպայման լինելու էր: Ու դա փոխադարձ էր: Մտածելու թեմա չկար՝ կգա, թե չի գա»:

Մեր զրուցակիցներից մի քանիսի կարծիքով՝ չափազանց

պարզունակ է նամակների փաստը ներկայացնել որպես շփման բացակայության ապացույց: Ընդհանրապես նամակագրությունը տարածված ավանդույթ է եղել Շարժման առաջնորդների մոտ, ընդ որում՝ ոչ միայն քաղաքական տեքստեր շարադրելու նպատակով:

Ռուզան Տոնոյանը պատմում է, որ «օրվա տարբեր ժամերի Վանոն կարող էր տանը նամակներ, երկտողեր գրել ինձ»:

Աննա Իսրայելյանն էլ փաստում է, որ Վազգենն ու Վանոն իրար նամակներ հաճախ էին գրում: «Հանրահայտ նամակից բացի՝ էլի նամակներ կան: Վկայություններ ունեմ, որ այդ նամակները եղել են միշտ և ոչ թե այն պատճառով, որ անմիջական շփում չեն ունեցել»:

«Բոլորն իրենց Ագռավաքարում հայտնվեցին»

Տարբեր առիթներով և տարբեր շրջապատներում Լևոն Տեր-Պետրոսյանն ասել է, որ 1998 թվականի իշխանափոխությունից «երեք ամիս անց Վազգենն արդեն զղջացել էր»:

Այս պնդումը հաստատող մի քանի անուղղակի վկայություններ կան:

Դավիթ Մաթևոսյանը, անդրադառնալով այդ ամիսներին, հղում է ազգային էպոսի ամենաողբերգական դրվագին.

«Տեր-Պետրոսյանը ճիշտ էր ասել, որ երեք ամիս հետո Վազգենը զղջացել էր, բայց ուշ էր: Էդտեղ էլ, եթե քարը փեշերից թափեին ու ինչ-որ շփումներ ունենային, գուցե էդ ուշն էլ էդքան ուշ չէր լինի, բայց Տեր-Պետրոսյանն էլ իր հերթին իր քարանձավն էր քաշվել: Էպոսի իմաստության վրա ես զարմանում, որ բոլորն իրենց Ագռավաքարում հայտնվեցին, ու բոլորը դատապարտվեցին: Հրանտն էլ իր Ագռավաքարում էր ու դրանով իրեն այս հասարակությունից դաժանորեն ազատեց»:

Ականատեսի հաղորդած այս դրվագն է պատմում Տիգրան

Պասկևիչյանը.

«Չեմ կարող անուններ տալ. Շարժմանը մոտ կանգնած և ինձ էլ շատ մտերիմ մարդ պատմել է, որ 1998-ի վերջին օրերին՝ գիշերը, ուշ ժամի, իր տան դուռը ծեծում են. բացում է, տեսնում է՝ Վազգենը, նստած դռան աստիճանների մոտ, լաց է լինում: Հարցնում է՝ ինչ է եղել, այ Վազգեն ջան: Վազգենն ասում է՝ ես հիմա եմ հասկանում, թե ինչ եմ արել»:

Ռոբերտ Քոչարյանը 2018 թվականի սեպտեմբերին Մեդիամաքսի հետ հարցազրույցում ասել էր.

«Ես տեսնում էի, թե որքան ծանր է Վազգենը տանում պառակտումը Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Այդ ժամանակ մենք շատ էինք շփվում, և ես տեսնում էի, թե ինչ դժվարությամբ նա անցավ դրա միջով»:

Արամ Սարգսյանը հաստատում է, որ Վազգենը չափազանց ծանր էր տանում Լևոն Տեր-Պետրոսյանի հետ խզումը և «անընդհատ փորձում էր մարդկային շփումների մակարդակում դա հաղթահարել, ընդառաջ քայլեր անել».

«Ապրիլի 7-ին մեծ ծաղկեփունջ էր ուղարկել Տեր-Պետրոսյանի տիկնոջը, բայց նա չէր ընդունել, հետ էր ուղարկել: Տեր-Պետրոսյանի որդուն՝ Դավիթին, որի քավորն էր Վազգենը, մշտապես ամեն կերպ աջակցել է»:

Արամ Սարգսյանը փաստում է, որ բացի 1997 թվականի աշնանը Տեր-Պետրոսյանին Վազգենի գրած նամակից՝ այլ նամակներ էլ կան:

«Վազգենի մահվանից հետո Տեր-Պետրոսյանը խնդրեց իրեն փոխանցել Վազգենին իր գրած նամակների պատճենները, նույնն էլ ես խնդրեցի: Այդ նամակները կարող են հրապարակվել միայն Տեր-Պետրոսյանի ցանկությամբ: Երբ ցանկանա՝ կարող է

հրապարակել: Այդ նամակների հրապարակումը ոչ միայն Վազգենի և Տեր-Պետրոսյանի մարդկային նկարագրին ու վարկանիշին չի վնասի, այլ ճիշտ հակառակը. այդ նամակագրությունը ցույց է տալիս, որ մարդիկ կարող են ունենալ տարբեր մոտեցումներ, բայց փորձել հիմնավորել դրանք փոխադարձ հարգանքի մթնոլորտում՝ քաղաքական փաստարկներ ներկայացնելով»,- մեկնաբանում է Արամ Սարգսյանը:

Լևոն Զուրաբյանը նշում է, որ և՛ Վազգենը, և՛ Վանոն խզումը ծանր էին տանում.

«Իշխանափոխությունից հետո ես Վազգենի հետ չէի խոսում, համարում էի, որ ինքը դավաճանել է մեր ընդհանուր պետական գործին: Պատահել է, որ հայտնվել ենք մի միջավայրում, բայց ես իր հետ ընդհանրապես չեմ շփվել ու տեսել եմ, թե ինքը դա ինչքան ծանր է տանում: Այսօր է, որ մարդկային հարաբերություններն այլևս կարևոր չեն, ով է այսօր ինչ-որ բանից նեղվում: Իսկ այն ժամանակ այդ ամենը կարևոր էր, ընկերությունը կարևոր էր, ռեսուրսազուրկ պետության մեջ պետությունն ամրապնդող ցեմենտի դեր էր խաղում»:

Ամերիկյան ուղևորության հետքը

Կարինե Խոդիկյանը պատմում է, որ Վազգենի հետ վերջին անգամ հանդիպել է 1999 թվականի հունիսին՝ Ազգային ժողովում:

«Ասաց՝ գիտես ինչ, պաշտպանության նախարար լինելը հեշտ էր, դուռը խփելով մտնում էի վարչապետի, նախագահի մոտ, ասում էի՝ բանակի համար էս է պետք, էն է պետք, տվեք: Հիմա ինձնից են ուզում: Էս ինչ ենք արել մեր գյուղացու հետ, մեր գյուղացին էս ինչ վիճակում է: Ես հիմա եմ հասկանում, թե մենք ինչ ենք արել մեր գյուղը: Հիմա ես գիշերները չեմ քնում, մտածում եմ՝ ինչ պիտի անենք, որ մի քիչ մեր սխալներն ուղղենք: Ու իր էդ ցավը, անհանգստությունը, տագնապը, թե էս ինչ ենք արել, ինչ ենք հասցնելու, ինչ ենք անելու»:

Մի քանի վկայություն կա այն մասին, որ 1999 թվականի հոկտեմբերին ԱՄՆ կատարած այցից հետո Վազգեն Սարգսյանը ծանր հոգեվիճակում էր: Այցի պաշտոնական առիթը Հայաստանի մասնակցությունն էր Համաշխարհային բանկի և Միջազգային արժույթի հիմնադրամի հանդիպումներին, սակայն Վաշինգտոնում Վազգեն Սարգսյանը հանդիպել էր նաև ԱՄՆ փոխնախագահ Ալբերտ Գոռի հետ:

ԱՄՆ կատարած այցի ծանր տպավորության մասին է վկայում նաև Մերուժան Տեր-Գուլանյանը.

««ԱՐ» հեռուստաընկերությունում նստած էի լինում, Վազգենը զանգում էր՝ շեֆ, ով կա մոտդ, գրի, գամ, մի քիչ նստենք, զրուցենք: Մոսոյի հետ խմիչք էր ուղարկում ու մեկ էլ ասում էր Գրետային (մեր բուֆետի աշխատողն էր)՝ պահի, մեկ էլ՝ Գրիգոր Խաչատրյանին, որ «Գարուն»-ից մնացած «ԱՐ»-ի աշխատակիցներից էր: Վերջին զրույցը Ամերիկայից վերադառնալուց հետո էր: Շատ տխուր էր, չափազանց տխուր: Ինչ-որ թուղթ էին իրեն ցույց տվել Էնտեղ: Ասում էր. «Շեֆ, չես պատկերացնում, թե ինչ ենք արել մեր երկրի հետ: Չասեց, թե ինչ: Ասեց՝ մի օր կասեմ մանրամասն»:

Ռոլանդ Շառոյանը հիշում է, որ այդ շրջանում Վազգենը կարող էր զանգել ուշ գիշերով՝ ժամը երեքին-չորսին.

«Ասում էր՝ վեր կաց, շորերդ հագի, Մոսոն ներքևում քեզ է սպասում, արի «Արմենիա»-ի պոդվալը՝ մի կտոր հաց ուտենք, խոսելիք ունեմ հետդ: Ու էդ բոլոր անգամները ես զգում էի, որ Վազգենն արդեն հույն ողբերգակների նման, մոտավորապես էդպիսի մի իրավիճակում է գտնվում: Հիմա, երբ որևէ սևեռուն միտք էր զարթնում իր մեջ, էլ չէր կարողանում կտրվել, երկար էր պահում մեջը: Առաջ կարող էր ձեռքը թափ տալ ու մի կողմ քշել: Դա նկատեցի, երբ Ամերիկայից հետ եկավ»:

«Ինձ մի զույգ կոշիկ կբերես»

Ամերիկյան այդ ուղևորության հետ է անուղղակիորեն կապված նաև Տիգրան Հակոբյանի այս հուշը.

«Ես Ամերիկա պիտի մի քանի օր շուտ մեկնեի: Մեկնելուցս մի օր առաջ՝ երեկոյան, Վանոն եկավ մեր տուն, երեխուն խաղալիք բերեց. Գուգոս նոր էր ծնվել: Գրպանից բավականին մեծ գումար հանեց, տվեց ինձ. «Էս քեզ Ամերիկայի համար»: Ընդ որում՝ էն ժամանակ Վանոն արդեն փող չուներ: Նախկինում նվեր ստացած Բաշինջաղյանի երկու նկար էր վաճառել, դրանով էր ապրում: Ես նեղվեցի, չէի ուզում գումարը վերցնել: Վանոն էլ. «Վազգենը քցիբ ա, դու էլ լիքը գործ ունես անելու: Եթե կարծում ես՝ շատ ա, ինձ մի զույգ կոշիկ կբերես (ի դեպ՝ բերեցի)»: Իրականում Վազգենը քցիբ չէր, պարզապես չգիտեր՝ փողն ինչ բան է, Վանոն գիտեր: Գնալուց առաջ Վազգենը հանձնարարություններ է տալիս. 10 օր պիտի Ամերիկայում լինեի, համայնքի հետ հանդիպումներ ունենայի և այլն: Վերջում հարցրեց՝ փող ունես: Ասացի՝ ունեմ: Բա՝ որտեղից, ասացի՝ Վանոն ա տվել: Դեմքը փոխվեց: Մոսոյին կանչեց, թե՝ Տիգրանին 500 դոլար փող կտաս: Ի դեպ, դա շատ ավելի քիչ էր, քան Վանոն էր տվել»:

Այն մասին, որ պաշտոնաթողությունից հետո Վանոն ֆինանսական խնդիրներ ուներ, վկայում է նաև Աննա Իսրայելյանը. «Եթե Սուքիաս-յանների օժանդակությունը չլիներ, Վանոն ընդհանրապես միջոցներ չէր ունենա»:

Վերջին ուղերձը

Մահվանից 5 օր առաջ Վազգեն Սարգսյանը հանդես է գալիս ավանդական տեսաուղերձով, որի հիմնական թեման կոռուպցիայի դեմ պայքարն էր.

«Կոռուպցիան վերածվել է աղետի և խոչընդոտում է երկրի

զարգացմանը: Մեր խնդիրն է նվազեցնել կոռուպցիայի ծավալը մեր երկրում՝ հասցնելով գոնե այն մակարդակի, որ չխոչընդոտի երկրի տնտեսական և քաղաքական զարգացմանը: Պայքարը, իհարկե, ուշ սկսեցինք, բայց կարծում եմ, որ չենք ուշացել: Հայաստանում կաշառակերությունը մեծ տարածում ունի, բայց երկրի զարգացմանն ամենից շատ խանգարում է հովանավորչությունը: Մեր իրականության մեջ առկա «տանիքի» հասկացությունը խոչընդոտում է երկրի ազատ զարգացմանը: Սա քաղաքական խնդիր է: Առանց կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի անհնար է ստեղծել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Ես խոստացել եմ, որ նախքան 2000 թվականի մայիսին Լոնդոնում կայանալիք մեծ բիզնես-ֆորումը մենք կոռուպցիայի դեմ լուրջ և հետևողական պայքարը կհասցնենք գոնե մեկնարկային կետին: Կարող եմ երաշխավորել, որ Հայաստանի կառավարությունը համարձակ և իրական քայլեր կձեռնարկի այս ուղղությամբ»:

Ռոմանտիզմից պրագմատիզմ տատանումը

Ռոլանդ Շառոյանը հիշում է, որ վերջին շրջանում Վանոյի ու Վազգենի շփումը չէր ստացվում.

«Իրենք նստում էին, խոսում էին՝ խմելով էլ, լուրջ էլ, բայց չէր ստացվում: Երկուսն էլ սիրում էին իրենց հայրենիքը, բայց գործնական սերը Վազգենի մոտ ավելի շատ էր, իսկ Վանոյի մոտ փիլիսոփայության էր վերածվում»:

Տիգրան Հակոբյանը հակադրում է Վանոյի առերևույթ սառնասրտությունն ու Վազգենի զգացմունքայնությունը. նրա խոսքով՝ Վազգենն անսպասելիորեն կարող էր աչքերը լցնել, իսկ Վանոն՝ երբեք:

Վանոյի՝ երբեմն դաժանության հասնող ուղղամտության մասին է վկայում Ալվարդ Բարխուդարյանի այս հիշողությունը.

«1998 թվականի մի օր գնում եմ ՀՀԾ, տեսնեմ՝ ընդունարանում Բորիկն է նստած՝ Վանոյի եղբայրը: Ասում եմ՝ ինչի՞ ես ստեղ նստած, բա՝ չի կանչում: Մտա, սուրճ տվեցին, ասում եմ՝ բա Բորիկին ինչո՞ւ չես կանչում, ասում է՝ ես իրան չեմ կանչել, թող սպասի: Մեկ էլ՝ մենք գնում ենք գառան խաշլամա ուտելու, գալիս ես: Հարցնում եմ՝ բա Բորիկը: Վանոն էլ՝ ես քեզ եմ հարցնում, գալիս ես, թե մնում ես Բորիկի հետ: Ասացի՝ մնում եմ Բորիկի հետ: Այսպես՝ Բորիկի հետ գնացինք մի սրճարան, ասացի՝ լավ, դե էս խելառ ախպորդ մասին մի քիչ պատմիր: Ինչ-որ բաներ պատմեց: Պարզվեց, որ Վանոն մինչև 7 տարեկանը չի խոսել: Գնում էր սարերը, կորչում»:

Անդրադառնալով Վազգենին բնորոշ ռոմանտիզմի և պրագմատիզմի տարօրինակ խառնուրդին՝ Տիգրան Պասկևիչյանը նկատում է, որ Վազգենի մոտ «ռոմանտիզմից պրագմատիզմ տատանումը» ահռելի թափ էր ստանում.

«Եվ այն, որ ջոկատները կարողացել էր համախմբել, դա էլ էր էդ տատանման շնորհիվ: Ռոմանտիզմով կարողանում էր սրտները շահել, պրագմատիզմով համոզում էր, որ չի կարելի իրար դեմ դուրս գալ: Էդ երկուսը գալիս, մի տեղ իրար էին հանդիպում: Բայց հետո, կարծում եմ, ինքը շատ տրվեց ռոմանտիզմին, որը քանդեց և մեր, և իր տունը»:

Դավիթ Մաթևոսյանի կարծիքով՝ «Վանոն ընկերաբար, անդավաճանորեն, բայց լուրջ նեղացած էր Վազգենից. բոլոր շփումներում, նամակի մեջ էլ է դա երևում, չնայած որ գորովանքով, սիրով է խոսում, բայց ասում է, որ դատապարտված է: Նաև Տեր-Պետրոսյանից էր նեղացած»:

Արամ Աբրահամյանը հիշում է, որ 1998 թվականին, երբ Ռոբերտ Քոչարյանն արդեն նախագահ էր ընտրվել, Վանոն իրեն ասել էր. «Իսկ եթե ես առաջադրվեի 1996 թվականին, գուցե ամեն ինչ ավելի լավ ստացվեր»:

Վանոյի ներքին վիրավորանքի մասին վկայող մեկ այլ դրվագ է հիշում Մերուժան Տեր-Գուլանյանը.

«Մի օր Վանոն գանգեց՝ արի մի քիչ գրուցենք: Սրճարանում հանդիպեցինք, նստեցինք, երկուսով մի շիշ արաղ խմեցինք: Վազգենի հանդեպ ոչ չարությամբ, բայց Լևոնի հանդեպ չարությամբ խոսեց, ու ես նեղվեցի, թե ինչի է Լևոնի հասցեին էդպես խոսում: Ասաց՝ ինքն իրեն փրկեց էդ վիճակից, բայց բոլորիս փուռը տվեց: Ասացի՝ ինչ է եղել, Վազգենի պես ընկեր ունես, կարող է դու Վազգենին մի բան ես ասել, ինքն ասել է՝ ոչ»:

«Գարուն»-ի նախկին խմբագիրը պատմում է, որ Հայաստանից հեռանալուց հետո մեկ անգամ է Վանոյի հետ խոսել: «Զանգեց, ձայնը լսեցի, էնքան զարմացա, ասեցի՝ վայ, Վանո ջան, որտեղ ես: Ակամա ստացվեց, բնական արձագանք էր: Անջատեց հեռախոսը: Մի քիչ հետո նորից զանգեց: Ասացի՝ կներես, որ հարցրի, ինձ թվաց՝ եկել ես, Երևանից ես զանգում: Հարցրի՝ ինց ես: Ասեց՝ ինց պիտի լինեմ, մի շիշ Absolut էի ճարել, խմեցի, պրծավ»:

Տիգրան Հակոբյանը պատմում է, որ 1999 թվականին, երբ սկսվել էր Վանո Սիրադեղյանի դատավարությունը, և Վանոն գնում էր նիստերին, Վազգենը մշտապես իր մարդկանց էր ուղարկում, որպեսզի ներկա գտնվեն դահլիճում և բացառեն Վանոյի հանդեպ որևէ անհարկի խոսք կամ պահվածք:

Ռուզան Տոնոյանն էլ ասում է, որ Վանոն մշտապես աջակցում էր Վազգենին և՛ որպես կրտսեր ընկերոջ, և՛ որպես պետական գործչի:

Հոկտեմբերի 27-ը

1999 թվականի հոկտեմբերի 19-ին «Առավոտ» օրաթերթում լույս է տեսնում Աննա Իսրայելյանի՝ «Չի կարող սոված ժողովուրդն իր արյան ծարավը հագեցնել» վերնագրով հարցազրույցը Վանո Սիրադեղյանի հետ:

Մեկնաբանելով իր ընդդիմախոսների այն պնդումները, որ Սիրադեղյանին դատապարտելը հասարակական պահանջ է, ժողովրդի ցանկությունը՝ Վանոն ասում է.

«Դժվար ժամանակներում հասարակությունը միշտ էլ ինչ-որ քավության նոխազներ, իրոք, պահանջում է: Չեմ կարծում, թե հատկապես իմ հանդեպ այդպիսի վերաբերմունք կա՝ ես չեմ տեսնում: Բայց ցանկացած նախարարի, վարչապետի եթե նստացնեն, իրոք, այդ ասածի մեջ ինչ-որ իմաստ կա՝ կթեթևանան մի ամսով: Բայց ամբողջ վտանգավորությունն այն է, որ երբ կյանքը չի լավանում, անընդհատ զոհեր են ուզելու: Չի կարող սոված ժողովուրդն իր արյան ծարավը հագեցնել: Չի կարող: Դա շարունակական ընթացք կլինի՝ ներառելով այսօրվա իշխողներին վաղը-մյուս օրը»:

Երբ Վանոն խոսում է ծանր տնտեսական վիճակից, Աննա Իսրայելյանը նրան հարցնում է. «Թերահավատ եք, թե Վազգեն Սարգսյանի կառավարությունն այս կացությունից ելք կգտնի»: Եվ պատասխան է ստանում. «Վազգենի հարցը չէ, նույնիսկ Մարգրեթ Թեթչերը չի կարող այս տնտեսությունը խելքի բերել»:

1999 թ. հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանյանի գլխավորած խումբը ներխուժում է Ազգային ժողովի նիստերի դահլիճ, որտեղ ընթանում էր կառավարության հարցուպատասխանը: Մինչ այդ Վազգեն Սարգսյանը նախագահի նստավայրում էր, որտեղ հանդիպում էր ընթանում ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթրոբ Թալբոթի հետ: Ռոբերտ Քոչարյանն իր գրքում գրում է, որ Վազգենին առաջարկել էր մնալ և քննարկել հանդիպման արդյունքները, բայց վարչապետն առարկել էր. Կարեն Դեմիրճյանի նկատմամբ հարգանքից դրդված՝ չէր կարող բաց թողնել հարցուպատասխանը:

Վարդան Օսկանյանն իր հուշերում գրում է.

> *«Հայց սպացանք, որ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Սթրոբ Թալբոթը 1999 թ. հոկտեմբերի 27-ին ժամանելու է Երևան՝*

հանդիպելու նախագահի հետ և քննարկելու ԼՂ հարցի կարգավորման մի նոր առաջարկություն: Միջնորդական առումով՝ սա շեղում էր Մինսկի խմբի բանակցային գործընթացից, որովհետև նախաձեռնությունը միայն ամերիկացիներինն էր, իսկ բովանդակային առումով՝ այն էապես տարբերվում էր մինչ այդ միջնորդների կողմից արված բոլոր առաջարկություններից:

Այդ հանդիպմանը մասնակցելու համար Քոչարյանը կանչել էր նաև ինձ և վարչապետ Վազգեն Սարգսյանին: Թալբոթի երկհոգանոց պատվիրակությանը միացել էր նաև Հայաստանում ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմոնը: Հանդիպումը սկսվեց առավոտ 10-ին և կեսօրվա ընդմիջումից հետո դեռ շարունակվում էր: Երեկոյան՝ մոտավորապես 4:15-ին, Վազգեն Սարգսյանը հիշեցրեց. «Պարոն նախագահ, ես և Վարդանը շուտով պետք է գնանք Ազգային ժողով՝ կառավարության հետ հարցուպատասխանին»: Բավական բարդ և դժվարին մեր քննարկումները դեռ հեռու էին ավարտվելուց, երբ Քոչարյանը, ամփոփելով օրվա քննարկումները, ի գիտություն ընդունեց առաջարկությունները՝ հույս հայտնելով, որ, թերևս, առիթ կունենանք հարցի քննարկումը շարունակելու և հստակ եզրահանգման հասնելու:

Այդ պահին դեսպան Լեմոնը թղթի մի կտորի վրա գրություն տվեց ինձ, որտեղ ասվում էր, որ Թալբոթը կուզեր ինձ հետ մի քանի այլ հարցերի մասին խոսել, և առաջարկում էր, որ ես իր մեքենայով ուղեկցեմ իրեն օդանավակայան, որտեղից հատուկ չվերթով պետք է մեկներ Անկարա:

Մի պահ մենք բոլորս ոտքի կանգնեցինք, ես պատրաստվում էի Վազգենից հարցուպատասխանին չմասնակցելու թույլտվություն հարցնել, երբ լսեցի՝ Քոչարյանը Վազգենին առաջարկեց՝ միգուցե ընդհանրապես չգնալ Ազգային ժողով և մնալ ու երեքով քննարկել նոր առաջարկությունը: Վազգենը

պնդեց, որ անպայման պետք է ներկա լինի նիստին, և այդպիսով, մենք բաժանվեցինք: Վազգենի թույլտվությամբ ես ուղեկցեցի ամերիկացիներին, իսկ նա մեկնեց Ազգային ժողով, որտեղ և տեղի ունեցավ հոկտեմբեր 27-ի ողբերգությունը»:

Ռուզան Տոնոյանն ասում է, որ Վանոն Վազգենի մահը շատ ծանր տարավ: «Երեք ամիս գրեթե ամեն օր Եռաբլուր էր գնում: Շատ ծանր ապրումների մեջ էր»:

«Հոկտեմբերի 27-ից հետո Վանոն օրումեջ՝ երեկոյան 22:00-ին, գալիս էր մեր տուն,- պատմում է Արամ Սարգսյանը,- մորս հետ նստում էին: Ես վարչապետ էի. ուշ էի տուն գալիս, նա ինձ ասում էր՝ ինձ ուշադրություն մի դարձրու, մի կաշկանդվիր, գնա՝ հանգստացիր: Մամայի հետ զրուցում էր ու լաց էր լինում»:

Տիգրան Հակոբյանը հիշում է. «Մարդիկ, որոնց հավատում եմ, ասել են, որ հոկտեմբերի 27-ից հետո երկու օր անընդմեջ լաց է եղել Վանոն»: Նրա համոզմամբ՝ Վազգեն Սարգսյանի ողբերգական վախճանի հետ Վանոն կորցրեց նաև ազատության մեջ մնալու վերջին հույսը.

«Առանց Վազգենի ինքը լրիվ անպաշտպան մնաց»:

2000 թվականի մարտին «Չորրորդ իշխանություն» թերթում հրապարակված հարցազրույցում Վանոն ասում է.

«Գնացած ամեն ջահել ընկերոջ հանդեպ անպայման մեղավորության զգացում ես ունենում: Այդ նույն ցավի, ափսոսանքի, լավ ընկեր անդառնալիորեն կորցնելու զգացողությունն ունեմ նաև ես: Մենք միշտ ընկերներ ենք եղել: Գրականության մեջ էինք, դրանով իսկ՝ ճակատագրակից: Բոհեմական, անդարդ կյանք էր՝ բառի լավ իմաստով: Հավաքվում էինք՝ ամուսնացած-չամուսնացած, մինչև լույս նստում, գինի խմում և շատ էինք երգում...

Դաշնակ, հնչակ, ՀՀՇ չկար, տարբերություն, թշնամանք չկար, ինչը հետո ցավալիորեն մտավ Հայաստան: Հետագայում, երբ մեկս մտավ Շարժման մեջ, միանգամից մյուսներն էլ հայտնվեցին այնտեղ: Այդպես մտանք քաղաքականության մեջ: Իհարկե, այն ժամանակ ոչ մեկիս մտքով չէր անցնում, թե հետագայում սոցիալական ինչ սանդուղքներում ենք հայտնվելու:

Ստեղծագործական անհոգ կյանքը կարճ տևեց, և միանգամից մտանք թոհուբոհի, պատերազմի մեջ: Այդ շրջանակում էլի մարդիկ կային, որոնք ընդհանրապես չխառնվեցին այդ ամենին. չգիտեմ՝ նրանք էին ճիշտ, թե մենք: Տեսակի խնդիր է, այդպես ստացվեց»:

ՄԱՍ X. «ԴՐԱՆՔ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ ՄԱՐԴԻԿ ԵՆ»

«Գրելու համար աշխարհի գեղագիտական ընկալում է պետք...»

Իշխանության մեջ եղած տարիների ընթացքում Վանոյին և Վազգենին մշտապես հարցրել են գրականություն վերադառնալու հավանականության մասին:

1994 թ. մայիսին «Մաքսիմում»-ի հետ հարցազրույցում Վանոն ասում է.

«Իհարկե, որոշ թախիծ կա: Բայց հիմա մտածում եմ գրականության մասին այնքան, որքան, օրինակ, բանկի կառավարիչը կամ գնացքի վարորդը, որը կարծում է, որ երբևէ մի բան կգրի: Այսօր ես անցյալը բոլորովին այլ կերպ եմ ընկալում: Գրելու համար մարդը մանկուց պետք է աշխարհի որոշակի գեղագիտական ընկալում ունենա: Իսկ հիմա ինձ մոտ 5-6 տարի լիովին ձախողում է այդ տեսանկյունից, և կրկին գրել սկսելու համար ես պետք է «դուրս գամ» այս կյանքից, մի քանի տարի նախկին կյանքով ապրեմ՝ միջավայրը գեղարվեստական տեսանկյունից ընկալելու նպատակով»:

Եվ շատ հետաքրքիր պատասխան է տալիս «Իսկ որքա՞ն է տարբերվում Վանո Սիրադեղյան գրողի և Վանո Սիրադեղյան քաղաքական գործչի աշխարհայացքը» հարցին.

«Շատ է տարբերվում: Դրանք բոլորովին տարբեր մարդիկ են: Պարզաբանեմ. սովորական մարդը բառացիորեն է ընկալում պատը, անցնող ավտոմեքենան: Եթե մարդը շրջակա միջավայրը գեղագիտական հայացքով դիտարկելու ընդունակ չէ, դա դժբախտություն չէ, ուղղակի դա նրան տրված չէ: Իսկ արվեստի մարդկանց ոչ այդքան ինքնին պատն է հետաքրքրում, այլ ավելի շատ այն, թե ինչ կարող է թաքնված լինել դրա ետևում:

Երբ ես գրում էի, ուղեղս լարված բռնում էր յուրաքանչյուր տեղեկատվություն, պատկեր և ֆիլտրում դրանք: Այսօր ես այնքան եմ զբաղված այլ խնդիրներով, որ, բնականաբար, իմ աշխարհայացքը փոխվել է»:

Գրականություն վերադառնալու հեռանկարի մասին Վանոն հանգամանորեն խոսում էր 1998 թվականի մայիսին՝ Սաթիկ Սեյրանյանի հետ հարցազրույցում, որ հրապարակվել էր «Առավոտ»-ում:

Պատմելով այն տարիների մասին, երբ զբաղվում էր գրականությամբ՝ Վանոն ասում է.

«Չէի կարողանում, ենթադրենք, գնալ այգի ու պարզ մարդկային ուրախությունը կամ գույները զգալ, գույներին նայել, ինչպես երեխան: Անընդհատ ամեն ինչում բանաձևելու ծիգ էի ապրում, միտքը ձևակերպելու, գրողական ընդհանրացում անելու, դիտարկումը ֆիքսելու ցանկություն ունենում: Խառնակ, իռացիոնալ վիճակ էր: Գրականությունն ու կյանքն իրար հետ էին ընթանում, ծանր կյանք էր: Հետո անդրադառնալիս զգում ես, որ պարզապես դա կյանք չէր: Պարզ, մարդկային ապրելակերպը կորչում է, երբ կյանքդ դառնում է քո արվեստի, քո զբաղմունքի գերին: Շատ տարիներ այդ կյանքով չեմ ապրում»:

Արմեն Դավթյանը հիշում է, որ երբ Վանոյի նախաձեռնությամբ 1996 թվականին Հրանտ Մաթևոսյանին ընտրեցին Գրողների միության նախագահ, ընտրությունից հետո բանկետ էր կազմակերպվել.

«Վանո Խեչոյանի հետ նստած ենք նույն սեղանի շուրջը: Մի ժամ հետո Վազգենը եկավ, նստեց մեր սեղանին: Վանոն հարցրեց՝ Վազգեն, գրո՞ւմ ես: Վազգենն ասաց՝ չեմ գրում, բայց էն, ինչ անում եմ, դու չես պատկերացնի՝ ինչքան կարևոր է: Ինքն արդեն բանակով էր ապրում: Ինքը չէր ափսոսում, որովհետև էն, ինչ անում էր, էն, ինչ ծնում էր, շատ ավելի մեծ ու կարևոր էր, քան երկու պատմվածք ավել գրելը: Դա արդեն իր համար պակաս կարևոր էր: Ինքը ճրբ պիտի

կայանար որպես գրող, ինքն իր ամբողջ էներգիան, ամեն ինչը դրեց ուրիշ տեղ: Ինքը դադարեց գրողի կյանքով ապրել ու չէր ափսոսում: Դա իր նոր ստեղծագործությունն էր»:

Վազգեն Սարգսյանի մահվանից տարիներ անց գրված իր տեքստում Հրաչյա Թամրազյանը, անդրադառնալով ընկերոջ կերպարին, այսպես է բնորոշում գրողին և զինվորին.

«...Ո՞վ կմտածեր, որ նրան վիճակված էր մղոններով առաջ անցնել իր գրական հերոսներից՝ ինքն իրենով, իր կյանքով կերտելով պատմությունը, փլուզելով մեզ պաշարած անզորության պատնեշները աշխարհազորով: Այս ժամանակների խելահեղ բեմահարթակներում լուսաշերտ էր բացվելու ազգային զարթոնքի և հերոսականության համար, որով ներս էր խուժելու նույն ինքը՝ նորին մեծություն պատմությունը՝ գրված նոր էջից, և Վազգենը ոչ թե իր գիր ու գրականությամբ, այլ իր ճակատագրով էր կերտելու այդ պատմությունը՝ միաձուլվելով նրան ու հետևից տանելով մի ամբողջ հերոսական սերունդ՝ հերոսներ, որոնք իրենց կյանքով գծեցին հայրենիքի նոր սահմանները: Ու հետո՝ նրա չարագույժ վախճանը: Ու հետո՝ բոլորիս գահավեժ անկումը: Ակամա հիշում ես մեծ բանաստեղծի տողերը.

Տեսավ աշխարհքը՝ գեղեցիկ, անվերջ,
Եվ հայրենիքներն անձուկ նրա մեջ,
Եվ աստվածները նրանց զանազան,
Եվ սուրբերը խիստ, խստրող ու դաժան:

Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին,
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին...»:

«Ապրելու ավելի շատ տարիներ ունի առջևում»

Հովիկ Չարխչյանը պատմում է, որ Վազգենը սովորաբար ամիսը մեկ «Զինուժ» ծրագրում ելույթ էր ունենում:

«Ինքը տեքստը գրում էր, տալիս էր մեզ, որ «սուֆլյորի» մեջ անցկացնեն, որ հետո նկարահանենք: Մի անգամ գնացի, որ տեքստը վերցնեմ, պարզվեց՝ իր անձնական նոթատետրի մեջ է գրել: Ասաց՝ բայց ես սա քեզ չեմ տա: Ասացի՝ բա տեքստը ինչ եմ անցկացնելու, դե էջը պատռի, տուր: Ասաց՝ չէ, չեմ պատռի: Ասացի՝ դե պիտի տաս, ուրիշ տարբերակ չկա: Բնական է, հետաքրքրվեցի, թե ինչի չէր ուզում տալ: Ու երբ թերթեցի, տեսա, որ գրառումներ է անում. դրվագներ, որոնք էն հում նյութն են, որից հետո կարող էր պատմվածք, վիպակ ծնվել: Շատ ափսոսում եմ, որ չգիտեմ, թե հիմա որտեղ է այդ տետրը, որովհետև դրանք արժեր տպագրել, շատ հետաքրքիր բաներ կային»:

Իսկ Սեյրան Շահսուվարյանը հիշում է «խմբակային ստեղծագործության» մի փորձի մասին.

«Մի օր կանչեց, ասաց՝ մահապարտների մասին պիտի կինո նկարես: Վերցնում ենք Վրեժ Իսրայելյանին, Գրիգոր Ջանիկյանին, մի քանի օրով գնում ենք Դիլիջան՝ սցենարը գրենք: Ասաց՝ էսպես է պայմանը. դուք առանձին սենյակներում եք ապրելու, գիշերը գրում եք ամեն մեկդ, հետո կարդում ենք, որ մեկինս լավն է՝ դա ենք ընտրում սցենարի այդ հատվածի համար: Գիշերը ժամը 3-ն է, ասում է՝ գնում ենք քնելու: Ասում եմ՝ պարոն նախարար, էրեխուս ծնունդն է, գնամ շնորհավորեմ, հետ գամ: Չայն տվեց՝ Մոսի, մի հատ գնդակ բեր: Ֆուտբոլի նոր գնդակի վրա ստորագրեց, ամսաթիվ դրեց: Ասաց՝ առավոտյան 6-ին էստեղ լինես: Եկել եմ Երևան, բոլորին արթնացրել եմ, շնորհավորել, հետ գնացել»:

Պատասխանելով Սաթիկ Սեյրանյանի այն հարցին, թե գրո՞ւմ է արդյոք Վազգեն Սարգսյանը՝ Վանոն ասում է.

«Չգիտեմ: Վազգենը ջահել է, ապագայում ավելի շանս ունի, քան ես: Ավելի շատ եռանդ ունի, նա ավելի ուշ է սկսել գրել: Նրա մեջ գրելու ջիղը կարծես ավելի մեծ է, քան իմ: Վազգենը նոր էր սկսել գրել, երբ Շարժումը սկսվեց, այսինքն՝ ավելի շատ կուտակված ցանկություն

ունի գրելու, գուցե և գրողական ամբիցիա, և իր համար ավելի հեշտ կլինի նստել-գրելը: Նա իրադարձությունների կենտրոնում ավելի է եղել, գոնե պատերազմի թեմայով ավելի շատ ասելիք կունենա: Եվ վերջին հաշվով՝ ապրելու ավելի շատ տարիներ ունի առջևում»:

ՄԱՍ XI. «ԻՐԵՆՑ ՀԵՏ ՍԵՂԱՆ ՆՍՏԵԼԸ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԷՐ»

Քաղաքականության մեջ Վանոյի և Վազգենի իրական կամ մտացածին մրցակցության մասին կարելի է երկար վիճել: Բայց կար մեկ այլ ոլորտ, որտեղ նրանք մրցակցում էին և չէին թաքցնում դա: Վանոն վստահ էր, որ ինքն է ավելի լավ երգում, Վագենն էլ իր հերթին վստահ էր, որ իրենն է առաջնությունը: Ժամանակակիցները տարբեր կարծիքներ ունեն:

Տիգրան Հակոբյանը հիշում է, որ Վազգենն իսկապես Վանոյից լավ էր երգում, և Վանոն նեղսրտում էր դրանից: «Երբ երկուսով էին երգում, զգացվում էր, որ մեկը լավ է երգում, մյուսը՝ վատ: Կար, իսկապես, այդ մրցակցությունը, որից, ի դեպ, Վազգենը հաղթած էր դուրս գալիս, բայց Վանոն դա չէր ընդունում»:

Լևոն Զուրաբյանը, ընդհակառակը, Վանոյի առավելության մասին է վկայում.

«Վազգենը հզոր ձայն ուներ, բայց «զոռ էր» տալիս ձայնին: Վանոն ավելի նուրբ էր, ավելի լավ էր հասկանում՝ երգելն ինչ է նշանակում»:

Ռուզան Տոնոյանի հետ մեր զրույցի բացահայտումներից մեկն էլ այն էր, որ երիտասարդ տարիքում Վանոն երգել էր Հովհաննես Չեքիջյանի երգչախմբում:

Դավիթ Մաթևոսյանի բնորոշմամբ՝ Վազգենը միշտ «մեծ էմոցիա էր դնում» իր երգի մեջ, բայց դրանով էլ չէր բավարարվում. երգելիս՝ որպես կանոն, ձեռքը խփում էր ամբիոնին կամ սեղանին. «Վանոն էլ երգում էր ռադիոյի ձայնով՝ Արամ Մերանգուլյանի, Շարա Տալյանի ձայնը նմանակելով: Իմ հարսանիքի հաջորդ օրը՝ երեկոյան, նստած էինք մեր գյուղում՝ Ահնիձորում, ինքը սեղանի շուրջը սկսեց երգել, ասացի՝ հա, ռադիոյի ազդեցությունը զգացվում է, մի քանի հոգի փոթկաց, որովհետև ոնց որ ինքը չերգեր»:

Անդրադառնալով Վանոյի և Վազգենի երգացանկին՝ Ռոլանդ Շառոյանը հիշում է, որ բանակի երեք տարիները Վանոյին «լրիվ ուրիշ մարդ էին դարձրել».

«Ուսանող տարիներին վերցնում էր կիթառը և երգում էր Под железный звон кольчуги: Իսկ Վազգենին որ ասում էիր՝ մի բան երգի, Արամ Ասատրյան էր երգում, հետո անցնում էր դաշնակցական հին երգերին: Իրենց երգած երգերով էլ իրենք տարբեր էին: Վանոն ռուսերեն «բլատնոյ» երգեր շատ գիտեր, բանակից էր բերել: Ռոմանսներ էլ էր երգում»:

Մերուժան Տեր-Գուլանյանն իր խոսքի մեջ հիշատակեց այն անթիվ-անհամար խնջույքները, երբ ձայնակցել է Վանո Սիրադեղյանին.

«Շատ էր սիրում «Պառավ յարս» երգը: Հենց քեֆը լավանում էր, էդ երգը պիտի երգեր, կամ «50 տարին թակեց դուռս»: Իսկ Վազգենն ինձ հաճախ խնդրում էր, որ երգեմ «Արազ ափին ծնված ընկեր» երգը: Էդ երգն ինձնից է սովորել: Շատ սիրում էր ու բազում տեղերում երգել է»:

Մեր գրեթե բոլոր զրուցակիցները փաստեցին, որ թեև Վանոն և Վազգենը սիրում էին ընկերական խնջույքներ և հանրային ընկալմամբ՝ «ուտող-խմող» մարդիկ էին, բայց չափը չէին անցնում:

Ինքը՝ Վանոն, 1994 թվականին «Մաքսիմում»-ին տված հարցազրույցում չէր համաձայնել In vino veritas («Ճշմարտությունը գինու մեջ է») լատիներեն ասացվածքի հետ.

«Ես այդպես չեմ կարծում: Գինին ուղեղը լուսավորում է շատ կարճ ժամանակով, իսկ մթագնում շատ երկար ժամանակով: Կյանքին սթափ հայացքը (բառացիորեն) ճշմարտությունն իմանալու լավագույն տարբերակն է: Ես դա գիտակցել եմ մինչև 25 տարեկանս, երբ բանակից վերադառնալուն պես դեռևս ոչ ծխում էի, ոչ էլ խմում»:

Հրանտ Բագրատյանը, հիշելով Վանո Սիրադեղյան սեղանակցին, նշում է, որ նա կատակասեր էր և անդիմադրելի սուր խոսք ուներ. «Սեղանների շուրջ հիմնական թամադան Վանոն էր, Վազգենն էլ էր լինում, բայց՝ որպես կանոն, Վանոն էր»:

Մի ուրիշ հետաքրքիր ընդհանրություն է նշում Արամ Սարգսյանը. «Երկուսն էլ գյուղի տղա էին, սիրում էին բնության գրկում լինել, իրենց այնտեղ լավ էին զգում: Կառավարական ամառանոցներում նրանց տները կողք կողքի էին, նաև ընդհանուր գրուցարան ունեին: Երեկոյան մի բաժակ գինի էին խմում, մի կտոր հաց էին ուտում, ու քաղաքականությունն այդտեղ ավարտվում էր. ուրիշ թեմաներ, ուրիշ հուշեր: Ժամանակը թռչում էր. չէիր նկատում, որ գիշերվա երեքն է արդեն»:

Լևոն Զուրաբյանն այս գնահատականն է տալիս երկու ընկերների հետ սեղանի շուրջն անցկացրած ժամերին.

«Իրենց հետ սեղանի շուրջն անցկացրած ժամանակը պարզապես ուտել-խմել չէր: Իրենց հետ սեղան նստելը իրադարձություն էր՝ հանդիսություն, փիլիսոփայություն, սրամտության մրցույթ: Բաներ էին ասվում, որ երբեք չեն ասվել, հումորներ էին արվում, որ երբեք չեն արվել, բայց հիշվելու էին մինչև կյանքի վերջ: Ուրիշ մթնոլորտ էր: Կարծես միասին մի բան էինք ստեղծում: Իրենք շատ հետաքրքիր, ստեղծագործ մարդիկ էին»:

«Ուշադիր եղեք Նիկոլի հանդեպ»

Վասակ Դարբինյանը 2020 թվականի գարնանը «Կարմիր թել» հաղորդաշարի շրջանակում պատմել էր, որ Հայաստանից հեռանալուց առաջ Վանոն նեղ ընկերական շրջապատում ասել էր «Ուշադիր եղեք Նիկոլի հանդեպ. նա քաղաքականության մեջ հայտ ներկայացրած սրտացավ գործիչներից միակն է թերևս, որին չեն հասցրել վարկաբեկել»:

Հովիկ Չարխչյանը, որ 1998 թվականին՝ Պաշտպանության նախարարությունից դուրս գալուց հետո, աշխատանքի էր անցել «Օրագիր» (ապագա «Հայկական ժամանակ») թերթում, փաստում է Վանո Սիրադեղյանի հոգատար վերաբերմունքը ոչ միայն Նիկոլ Փաշինյանի, այլև խմբագրության երիտասարդ լրագրողների հանդեպ.

«Վանոն երեկոյան հաճախ էր գալիս խմբագրություն: Երեկոյան գալիս էր, թիկնապահն էլ խմբագրության էրեխեքի համար արկղով ուտելիք էր բերում: Զրուցում էինք, տարբեր բաներ էինք քննարկում՝ քաղաքականությունից մինչև գրականություն»:

«Դա է «սպանել» Վանոյին»

Ըստ Լևոն Զուրաբյանի՝ 2018 թվականին, երբ Վանոյի հակառակորդների դարաշրջանն ավարտվեց, «եկավ մի մարդ, որը պիտի Վանոյին վերադարձներ».

«Բայց, իմ տեղեկություններով,- նշում է նա,- Փաշինյանը Վանոյին փոխանցել էր, որ «պիտի գաս, մի քանի ամիս նստես, հետո ես քեզ ներում կշնորհեմ»: Կարծում եմ՝ դա է «սպանել» Վանոյին. ինքը նման ստորություն չէր սպասում»:

2020 թվականի մարտի 5-ին Նիկոլ Փաշինյանը Երկրապահ կամավորականների միությունում մասնակցում էր Վազգեն Սարգսյանի 61-ամյակին նվիրված միջոցառմանը:

«Վազգեն Սարգսյանի գործունեությունն առաջին հերթին որպես ազատամարտիկ՝ արտահայտությունն էր այն հավատի, որ մարդը կարող է ունենալ ինքն իր ուժերի նկատմամբ՝ փոխելու սեփական ժողովրդի ճակատագիրը, փոխելու սեփական ժողովրդի ապագան: Եվ կարծում եմ, որ այդ հավատն 90-ականների սկզբին հենց Վազգեն Սարգսյանի մեջ է ծնվել: Այդ հավատը վարակել է հարյուրավոր, հազարավոր մեր հայրենակիցների, և այդ հավատի շնորհիվ է, որ տեղի է ունեցել հաղթանակն Արցախյան ազատամարտում»,- նշել էր Նիկոլ Փաշինյանը:

Դրանից երեք տարի անց՝ 2023 թվականի հուլիսի 23-ին, նա մասնակցել էր Երկրապահ կամավորականների միության ստեղծման 30-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը, որտեղ իր ելույթում, մասնավորապես, ասել էր. «Իմ համոզմունքն այն է, որ Վազգեն Սարգսյանը սպանվել է, որովհետև նախ հասկացել էր անհրաժեշտությունը, բայց նաև վերջնական որոշում էր կայացրել՝ ազգային ազատագրական պայքարը վերաձևակերպել ու դարձնել պետականակերտման պայքար, պետության պայքար, պետության ինստիտուցիոնալ կայացման պայքար, պետության հզորացման պայքար, որովհետև մենք երբեմն չենք հասկանում, և սա է մեր մեծագույն խնդիրը. մեր իրականության մեջ միշտ չէ, որ Պետությունը և Հայրենիքն ընկալվում են նույն կերպ: Եվ այդ ընկալումների ճեղքումն է, որ ի հայտ են բերում մեր բոլոր պարտությունները: Մենք պետք է նույնացնենք Հայրենիք և Պետություն հասկացությունները, որովհետև Պետությունը շատ կոնկրետ է, և եթե Հայրենիքը Պետություն չէ, ցանկացած ուրիշ Պետություն կարող է դառնալ Հայրենիք»:

Նիկոլ Փաշինյանի երեք էջանոց այս ելույթում ոչ մի անգամ չէին հիշատակվել **«Արցախ»** և **«հաղթանակ» բառերը:**

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր բոլոր զրուցակիցներին այս հարցն էինք տալիս. արդյո՞ք դաժան օրինաչափություն կար այն բանում, որ Վազգեն Սարգսյանը պետք է այդքան վայրագորեն սպանվեր, իսկ Վանո Սիրադեղյանը մահանար տարագրության մեջ՝ ավելի քան 20 տարի ձգված բացակայությունից հետո:

Աշոտ Ոսկանյանը համաձայնեց, որ, թերևս, ինչ-որ օրինաչափություն դրանում կար, որովհետև կենդանության օրոք երկուսն էլ յուրովի «սպիտակ ագռավ» էին իրենց ժամանակակիցների մեջ.

«Իրենք, կարծես, ընդհանուր հանրության ընթացքից մի քիչ դուրս էին: Եվ դա իրենց զարմանալիորեն մի քիչ օտար էր դարձնում: Այդ օտարությունն անսպասելի է, որովհետև երկուսն էլ, թվում է, բավականաչափ կապեր ունեցող մարդիկ էին: Վանոյի առաջին պատմվածքներից մեկում էսպիսի ֆանտաստիկ ձևակերպում կա. «Դու ինչի՞ տեր ես, որ ինքդ քեզ էդքան հերիք ես»: Վանոն ամբողջ կյանքում ինքն իրեն էդքան հերիք էր: Վազգենն էլ՝ իր ոճի մեջ, բայց երկուսն էլ, ինչ-որ չափով, դուրս էին կանգնած ընդհանուր ընթացքից»:

Հետաքրքիր դիտարկում է անում Հովիկ Չարխչյանը. նրա կարծիքով՝ չնայած բնավորությունների ու խառնվածքների տարբերությանը՝ «Վազգենի հոգևոր կապը Վանոյի հետ պայմանավորված էր նաև նրանով, որ նա Վանոյի մեջ նաև իրեն էր տեսնում, իր չբացահայտված կողմերը»:

Այս խոսքերով է նա ձևակերպում այդ յուրօրինակ դաշինքն առերևույթ այդքան տարբեր երկու անհատների միջև.

«Ես տեսել եմ, որ երբ երկուսով միասին էին ինչ-որ միջավայրում, նրանք մի ամբողջություն էին: Թեև ծայրահեղորեն տարբեր մարդիկ էին, բայց մեկը մյուսին լրացնում էր»:

Հայաստանի նախկին վարչապետ Արմեն Դարբինյանն էլ այսպես է բնորոշում այդ հակադրամիասնությունը.

«Շատ նուրբ էին իրար վերաբերվում, կարծես թե շփվում էին ներքին պոետիկ լարերի միջոցով: Թե՛ մեկը, թե՛ մյուսը իրար մասին խոսելիս անպայման բարի ժպիտով էին համեմում խոսքը: Քաղաքական որոշումներում, քայլերի տրամաբանության մեջ գրեթե միշտ իրենց մոտեցումները չէին համընկնում, ինչպես չի կարող համընկնել երկու ինքնատիպ գրողի գիրը: Չէի ասի, որ հակառակ, բայց գրեթե միշտ տարբեր կարծիքների էին՝ թե՛ ընթացիկ վիճակի գնահատականների և թե՛ ապագայի մասին դատողություններում: Սակայն դրա հետ մեկտեղ բացառիկ հարգանք կար միմյանց նկատմամբ, նրանք իրար կարիքն ունեին անգամ հակառակ գաղափարներ պաշտպանելիս, նրանք սնում էին միմյանց ու չէին հագենում իրարից»:

Արամ Սարգսյանը հաստատում է երկու ընկերների ընկալումների, խառնվածքների տարբերությունը. «Իրենք շատ լավ ընկերներ էին, բոլոր առումներով՝ օրինակելի ընկերներ, բայց նաև շատ հարցերում շատ տարբեր մարդիկ էին»:

Էդվարդ Միլիտոնյանն էլ, ամփոփելով այդ տարբերություններն ու հակասությունները, նշում է, որ դրանք գրեթե անխուսափելի են երկու տաղանդավոր, ինքնատիպ արվեստագետի պարագայում. «Գրողների հարաբերությունները շատ հետաքրքիր, տարօրինակ ու հաճախ անհասկանալի կարող են լինել, որովհետև նրանք բարդ էություններ են: Ամեն ինչ չէ, որ բառերով կասեն. չասվածն էլ ունի իր մեծ խորհուրդը, բայց էլի ընկալելի է»:

Ալվարդ Բարխուդարյանը հիշում է, որ Վանոն իսկապես «մանրամասն սիրելու» հատկություն ուներ՝ հայրենիքը, ընկերոջը:

«Բայց դրա հետ մեկտեղ՝ եթե մի փոքր վրիպում անգամ թույլ տայիր, ինքն անողոք էր դառնում: Իսկ Վազգենի համար էս երկիրը, հայրենիքը ասես ժայռ լիներ, հսկայական մի բան, որի մեջ

կարող էր մանրուքները չտեսնել: Եվ իրենց այդ տարբերությունը միշտ էր արտահայտվում: Բայց նաև միմյանց ցավով ապրող, միմյանց թիկունքին կանգնող էին: Նախանձ չկար նրանց հարաբերություններում»,- վստահ է Ալվարդ Բարխուդարյանը:

Կարինե Խոդիկյանի բնորոշմամբ՝ Վանոն և Վազգենը ողբերգական կերպարներ են.

«Գրողները ամենադաժան ձևով հատուցեցին, թեև ամենաանշահախնդիր ձևով էին իրենց հայրենիքը սիրում»:

Սամվել Սևադան, իր հերթին, հույս ունի, որ կգա ժամանակը, «երբ կփորձեն Վանոյի առեղծվածը վերջնականապես պարզել». ինչ վերաբերում է երկու ընկերների փոխհարաբերությանը, նա համոզված է, որ «դրանք, միևնույն է, մինչև վերջ չեն բացվի»:

«Բայց մի բան պարզ էր. այն, որ Վանոն Վազգենին շատ էր սիրում, Վազգենն էլ՝ Վանոյին: Պարզապես երկուսն էլ կամակոր էին մի քիչ, տղայական բան կար մեջները: Իրար չէին զիջում, բայց գաղտնի պաշտպանում էին միմյանց»,- ամփոփում է արվեստագետը:

Վանոյի և Վազգենի «բանավիճող», «իրար բերանից երգ խլող» ընկերության հուզիչ բնութագիր է տալիս Արամ Սարգսյանը.

«Վանոյին և Վազգենին միավորում էր սերը՝ սերը հայրենիքի նկատմամբ: Այն անսահման էր: Մնացած ամեն ինչ դառնում էր երկրորդական: Ու նաև դա էր պատճառը, որ հայտնվելով հակառակ դիրքերում՝ նրանք թշնամիներ չդարձան: Իրենք ինչպես բանավիճող, իրար բերանից երգ խլող ընկերներ կային, այդպես էլ մնացին: Ցավոք, երկուսն էլ մեր ժողովրդի կողմից արժանի ընկալում չունեցան, և դա շատ տխուր է»:

Ռուզան Տոնոյանին հարցնում ենք՝ եթե Վանոն ու Վազգենը հանդիպել են իրար այն աշխարհում, իր կարծիքով՝ հաշտ են

միմյանց հետ.

«Վանոն՝ հաստատ»:

«Թող այնտեղ իրար հետ հանդիպեն, վիճեն, երգեն,- ասում է Արամ Սարգսյանը:- Իրենք հարյուր տոկոսով անկեղծ էին ժողովրդի ու պետության հետ: Ցավոք, այսօր չկա որևէ մեկը, որ փորձի գոնե նմանվել նրանց»:

Մեծ է այս գիրքը որևէ եզրակացությամբ ավարտելու գայթակղությունը: Բայց մենք դա չենք անի: Կփորձենք այն ամփոփել իրենց իսկ խոսքերով:

1994 թվականին, երբ Վանոյին խնդրել էինք պատասխանել «Ո՞վ է նա՝ Վանո Սիրադեղյանը» հարցին, նա առաջին հայացքից պարզունակ թվացող պատասխան էր տվել. «Վանո Սիրադեղյանը բարի չէ, բայց չար էլ չէ»:

Կարծում ենք՝ դժվար է ավելի ճշգրիտ բնորոշում տալ նրա կերպարին:

Նույն հարցազրույցում Վանոն ասել էր.

«Ես երբեք ռոմանտիկ չեմ եղել, և ինձ համար ռոմանտիզմը երբեք սիրո առարկա չի եղել: Ես կարող եմ համակերպվել ռոմանտիկի հետ միայն այն դեպքում, եթե նա այլ գերորակներ ունենա: Ես ռոմանտիկներին չեմ սիրում և կարծում եմ անգամ, որ ռոմանտիզմն ինչ-որ չափով խելքի բացակայության նշան է: Ես երբեք, անգամ մանուկ ժամանակ հեքիաթներ չեմ կարդացել: Թող ռոմանտիկները լինեն, բայց ինձնից հեռու»:

Բայց մի ռոմանտիկի Վանոն իրեն մոտ թողել էր: Որովհետև Վազգենն ուներ այդ գերորակները: 2000 թվականի մարտին «Չորրորդ իշխանությանը» տված իր հարցազրույցում Վանոն ասել էր Վազգենի մասին.

«Ինքը ռոմանտիկ էր, առանց դրա հնարավոր չէր այդքան բան անե բանակ ստեղծել»:

Այդ «ռոմանտիկն» էլ մահվանից մի քանի ամիս առաջ խոստովանել էր Անահիտ Ադամյանին.

«Ժողովուրդն ինձ չի ճանաչում, ինձ նորմալ ճանաչում են իմ նեղ շրջապատի մարդիկ: Մնացյալը գիտեն ինձ մորուքով, գիտեն ջղայնացած, գիտեն քրտնած. այսօրվա կերպարը դա է: Ինձ չեն հասկանում, ինձնից վախենում են: Իրենց համար արջի կերպար են ստեղծել ու իրար վախեցնում են: Մեկ-մեկ ես էլ եմ վախենում, որ չեմ հասցնի, որ ժամանակ չեմ ունենա, ցանկություն չեմ ունենա, չգիտեմ էլ՝ ինչ չեմ ունենա՝ ժողովրդին ասելու. «Ա՛յ ժողովուրդ, իրար հասկանանք, ճիշտ հասկանանք իրար, ես Աստված չեմ, ես զինվոր եմ, ես հայ եմ»»:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Շնորհակալություն ենք հայտնում մեր բոլոր զրուցակիցներին.

Ալվարդ Բարխուդարյանին, Անդրանիկ Հակոբյանին, Անահիտ Պապոյանին, Աննա Իսրայելյանին, Արամ Աբրահամյանին, Արամ Սարգսյանին, Արմեն Դարբինյանին, Արմեն Դավթյանին, Աշոտ Ոսկանյանին, Դավիթ Գասպարյանին, Դավիթ Մաթևոսյանին, Էդվարդ Միլիտոնյանին, Հովիկ Չարխչյանին, Հրանտ Բագրատյանին, Կարինե Խոդիկյանին, Լևոն Զուրաբյանին, Մերուժան Տեր-Գուլանյանին, Միեր Իսրայելյանին, Նիկոլայ Գրիգորյանին, Ռոլանդ Շառոյանին, Ռուզան Տոնոյանին, Սամվել Սևադային, Սեյրան Շահսուվարյանին, Տիգրան Հակոբյանին, Տիգրան Պասկևիչյանին, Վանուշ Շերմազանյանին, Ժիրայր Լիպարիտյանին:

Անկեղծ աջակցության համար երախտապարտ ենք Մանուկ Նիգոյանին և Անահիտ Ադամյանին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում աստղաֆիզիկոս, Starmus փառատոնի համահիմնադիր և գեղարվեստական ղեկավար Գարիկ Իսրայելյանին: Եթե 2024 թվականի մայիսին նա Արա Թադևոսյանին չհրավիրեր Բրատիսլավայում ընթացող Starmus փառատոնին, այս գիրքն այդպես էլ սոսկ մտահղացում էր մնալու: